

**Հանձնաժողովի Աշխատակազմի Աշխատանքային Հաշվետվություն
Եվրոպական Հարևանության Քաղաքականություն
Երկրի Ձեկույց
Հայաստան**

Բովանդակություն

1. Ներածություն.....	3
1.1. Եվրոպական Միության և Հայաստանի միջև հարաբերությունները	4
1.2. Համայնքային աջակցություն.....	6
2. Քաղաքական խնդիրներ.....	7
2.1. Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն.....	7
2.2. Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ	10
2.3. Արտաքին հարաբերություններ – ընդհանուր.....	12
2.4. Տարածքային հակամարտություններ և այլ հակամարտություններ/վեճեր	13
2.5. Արդարադատություն և ներքին գործեր.....	14
3. Տնտեսական և սոցիալական իրավիճակը	16
3.1. Մակրոտնտեսական և սոցիալական ակնարկ.....	16
3.1.1. Վերջին տնտեսական զարգացումները և ակնարկ	16
3.1.2. Ֆիսկալ կառավարում, դրամական և փոխանակման կուրսի քաղաքականություն.....	17
3.1.3. Արտաքին իրավիճակը.....	18
3.1.4. Սոցիալական իրավիճակը և մարդկային զարգացման քաղաքականությունները	18
3.1.5. Կայուն զարգացում	20
3.2. Կառուցվածքային բարեփոխումներ և առաջընթաց դեպի գործող և մրցակցային շուկայական տնտեսություն.....	20
3.2.1. Տնտեսության և մասնավորեցման մեջ պետական ներգրավածությունը	20
3.2.2. Կարգավորիչ դաշտ և մասնավոր հատվածի զարգացում.....	21
3.2.3. Ֆինանսական հատված	22
3.2.4. Այլ դոմորների հետ հարաբերությունները	23
3.3. Առևտրի հետ կապված հարցեր, շուկայական և օրենսդրական բարեփոխումներ	24
3.4. Տրանսպորտ, էներգետիկա, տեղեկատվական հասարակություն, շրջակա միջավայր, հետազոտություն և նորամուծություն, մարդիկ-մարդկանց հարցեր	30

1. Ներածություն

2004թ. մայիսի 1-ին Եվրոմիությունն ընդլայնվեց՝ ընդունելով տաս նոր անդամ պետությունների: Դա փոփոխություններ մտցրեց ԵՄ-ի քաղաքական աշխարհագրությունում՝ նոր հնարավորություններ ընձեռնելով միության և արևմուտքում ու արևելքում գտնվող իր հարևանների միջև գյուղային ունեցող հարաբերությունների խորացման համար: Միությունը հաստատակամ է հետագա զարգացնել իր հարևանների հետ փոխադարձ գործընկերությունը՝ խթանելով անվտանգությունը, ինչպես նաև կայունությունն ու բարգավաճումը: ԵՄ-ի արտաքին սահմանները չեն դառնա տարանջատող նոր գծեր, այլ ուժեղացված համագործակցության կենտրոնացում:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) հավակնորդ նպատակներ է սահմանում հարևան երկրների հետ համագործակցելու համար՝ հիմք ընդունելով ընդհանուր արժեքների, առանցքային արտաքին քաղաքականության նպատակների, տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների հանդեպ պարտավորությունները: Գործընկեր երկրները հրավիրված են ավելի սերտ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ, որպեսզի հզորացվի միջսահմանային համագործակցությունն ու ընդհանուր պատասխանատվություն ստեղծվի հակամարտությունների կանխարգելման և կարգավորման համար: Միությունն առաջարկում է իր ներքի շուկայում և հետագա տնտեսական ինտեգրացիայում մասնակցելու հեռանկար: Այս գործընթացի արագությունն ու լարվածությունը կախված կլինեն յուրաքանչյուր երկրի այս ծավալուն օրակարգում ընդգրկված լինելու կամքից և կարողությունից: Քաղաքականությունը կառուցվում է արդեն գոյություն ունեցող համագործակցության շրջանակների վրա:

Համաձայն հանձնաժողովի առաջարկությունների 2004թ. հունիսի 14-ին խորհուրդը որոշեց հնարավորություն առաջարկել Հայաստանին, Ադրբեջանին և Վրաստանին մասնակցել Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ, ի շարք այլոց հայտարարելով, որ *«Սա նշանակալից քայլ է տարածաշրջանում միության ներգրավածության ուղղությամբ: Յուրաքանչյուր երկրի կտրվի նույն հնարավորությունները ԵՄ-ի հետ կապերը զարգացնելու համար, ներառյալ գործողությունների ծրագրի միջոցով և կղատվի ԵՀՔ-ի ընդհանուր քաղաքականության հեռ համահունչ անհատական արժանիքների հիման վրա: Խորհուրդը հրավիրել է նաև հանձնաժողովին և SG/HR, քաղաքական համագործակցության և CFSP հետ կապված հարցերի մասին զեկույց ներկայացնել յուրաքանչյուր երկրի քաղաքական և տնտեսական բարեփոխումների վերաբերյալ կատարած առաջընթացի մասին»:*

Այս ցեկույցում¹ հանձնաժողովը գնահատում է Հայաստանի և ԵՄ-ի միջև երկկողմանի հարաբերությունները: Այն արտացոլում է գործընկերության և համագործակցության շրջանակներում կատարված առաջընթացը և նկարագրում է այս գործընկերության համար կոնկրետ հետաքրքրություններ կայացնող բնագավառների ներկայիս իրավիճակը. արժեքների վրա հիմնված քաղաքական հաստատությունների զարգացումը՝ ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ, որոնք սահմանված են համաձայնագրում, տարածաշրջանային կայունություն և

¹ Հիմնականում սրանք վերաբերում են մինչև 2004թ. դեկտեմբերի 31-ի միջոցառումներն ու զարգացումները:

համագործակցություն արդարադատության և ներքին գործերի հարցում ու տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, որոքն զարգացման և արդիականացման, առևտրի հետագա ազատականացման և ներքին շուկայում աստիճականան մասնակցության համար համար նոր հնարավորություններ կստեղծեն: Ձեկույցը հանձնաժողովին առաջարկություններ է ներկայացնում միացյալ ԵՀՔ գործողությունների ծրագրի մշակման համար և ծառայում է, որպես Հայաստանի հետ միության հարաբերությունների հետագա առաջընթացը գնահատելու հիմք:

1.1. Եվրոպական Միության և Հայաստանի միջև հարաբերությունները

ԵՄ-Հայաստան Գործընկերության և Համագործակցության Համաձայնագիրը (ԳՀՀ) կնքվեց 1996թ., ուժի մեջ մտավ 1999թ. և հանդիսանում է ԵՄ-Հայաստան հարաբերությունների իրավական հիմքը: Հարգանքը ժողովրդավարության, միջազգային իրավունքի սկզբունքների, մարդու իրավունքների և շուկայական տնտեսության սկզբունքների հանդեպ հանդիսանում են այն էական տարրերը, որոնց վրա հիմնված է ԵՄ-Հայաստան գործընկերությունը: ԳՀՀ-ը համագործակցության լայլ բնագավառներ է սահմանում քաղաքակա երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսական, օրենսդրական և մշակութային համագործակցության համար: Այս երկխոսությունը կառուցվում է միջազգային խաղախության, և անվտանգության, ինչպես նաև վեճերի խաղախ կարգավորման խթանման միացյալ պարտավորությունների վրա: ԳՀՀ-ի միջոցով, որը վերացնում է նաև առևտրային քվոտաները և հնարավորություններ է ընձեռնում մտավոր, արդյունաբերական և առևտրային իրավունքի պաշտպանության համար, կողմերը համաձայնվել են միմյանց տալ Ամենապատասխան Պետության (MFN/ԱՊ) կարգավիճակ և Հայաստանն օգտվում է ԵՄ-ի Նախապատվությունների Ընդհանրացված Համակարգից (GSP/ԵՀՀ):

ԳՀՀ-ի շրջանակներում ստեղծված տարբեր միացյալ **հաստատությունները** (Համագործակցության Խորհուրդ, Համագործակցության Կոմիտե, Առևտրի, Տնտեսական և Համապատասխան Իրավական Գործերի Ենթահանձնաժողով, ինչպես նաև Խորհրդարանական Համագործակցության Կոմիտե) սահուն կերպով են գործել և ապահովել են պարբերական քաղաքական երկխոսություն: Համագործակցության Խորհուրդը տարեկան ժողովներ է գումարել 1999թ.: Վերջինը եղել է Բյուսելում 2004թ. սեպտեմբերին:

Գլխավոր Գործերի Խորհրդրում 2001թ. փետրվարին ԵՄ-ն հաստատեց **Հարավային Կովկասի տարածաշրջանում ավելի ակտիվ քաղաքական դեր խաղալու իր կամեցողությունը** և իր մտադրությունը լրացուցիչ եղանակներ որոնելու, որոնք կխթանեն տարածաշրջանում հակամարտությունների կանխարգելման և կարգավորման ջանքերը և մասնակցելու հետհակամարտային վերականգնմանը: 2001թ. հոկտեմբերի 30-ի իրենց միացյալ հաղորդագրության մեջ Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի Արտաքին Գործերի Նախարարները ողջունեցին տարածաշրջանում ԵՄ-ի ավելի ակտիվ դերակատարման պարտավորությունը՝ երեք երկրների հետ համագործակցության խորհրդի կապակցությամբ:

Արդեն շատ տարիներ **Մեծամորի Միջուկային Ատոմակայանի (MNPP/ՄՄԱ)** հարցը ԵՄ-Հայաստան երկկողմանի օրակարգում կարևոր խնդիր է: ՄՄԱ-ի վաղ փակումը սահմանվել է, որպես ԵՄ-ի առանցքային նպատակ՝ խորհրդային ժամանակահատվածում կառուցված առաջին սերնդի այսպիս կայանների հանդեպ ընդհանուր քաղաքականության գծով: 2001թ. ԵՀ-ն առաջարկեց դոնորների

խորհրդաժողով կազմակերպել, որպեսզի ստեղծվի մի հիմնադրամ՝ ֆինանսավորելու այլընտրանքային էներգետիկայի կարողությունն ու ներդնելու մինչև 100 միլիոն եվրո, եթե Մեծամորի փակման կոնկրետ ամսաթիվ նշվի: Սրա վերաբերյալ ոչ մի համաձայնություն չի գնտվել ԵՄ-Հայաստան երկխոսության մեջ: Հայաստանը նշել է ԵՄ-ին, որ էներգետիկայի կարողությունները պետք է հաշվի առնի Հայաստանի ապագա ակնկալվող էներգետիկ կարիքները, էներգետիկ անվտանգության հզորացման կարիքը և ՄՄԱ-ի փակման ազդեցության հաշվանցումը էլեկտրոէներգիայի սակագների վրա: ԵՄ-ն նշել է, որ այն հաշվի կառնի այս դիրքորոշումը՝ դիտարկելով ԵՀԳ-ով Հայաստանի առջև բացվող օգուտները:

2003թ. հուլիսին ԵՄ խորհուրդը դեսպան Չեյկկի Թալվիթեին նշանակեց, որպես **Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ**: Հայաստանը ողջունեց այս նշանակումը: Ի շարք այլոց, նրա մանդատի մեջ են մտնում աջակցություն խորհրդին Հարավային Կովկասի հանդեպ համապարփակ քաղաքականության մշակման, հակամարտությունների կանխարգելման աջակցություն տրամադրելու և տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման համապարփակ քաղաքականություն մշակելու համար: Նա պարբերաբար այցելել է Հայաստան և առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, ուր նա այցելեց 2004թ. հուլիսին: ԵՄԴՆ-ն մշտական կապի մեջ է տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Ռուսաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի հետ: Իր վերընտրվելուց հետո **Նախագահ Քոչարյանն** այցելեց Բրյուսել 2003թ. դեկտեմբերին և արտահայտեց Հայաստանի պատրաստակամությունը խորացնելու համագործակցությունը ԵՄ-ի հետ՝ ներառյալ գիտության և հետազոտությունների բնագավառում: Նա նշեց նաև Հայաստանի մտադրությունը ԵՀ-ի հակադեմփինգային կարգավորման շրջանակներում «շուկայական տնտեսության կարգավիճակ» ստանալուն Հայաստանի մտադրության մասին:

2004թ. ապրիլի 29-ին Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց **«Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագիր** մշակելու համար...»: Որոշմամբ ստեղծվում է համակարգող խորհուրդ և սահմանում է հանձնաժողովին աջակցելու ԵՀ-ի կողմից ֆինանսավորվող Հայաստան-Եվրոպա քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի դերը: ԵՀ-ն լրացուցիչ տեխնիկական աջակցություն է տրամադրում օժանդակելու մինչև 2005թ. հոկտեմբերը Հայաստանի ազգային ծրագրը նախապատրաստելու համար:

2004թ. հունիսի 14-ի խորհրդի որոշմամբ **Եվրոպական Հարևանության Քաղաքականության** մեջ Հայաստանի (Ադրբեջանի և Վրաստանի հետ միասին) ընդգրկման առաջարկությունը նշանակալից քայլ է ԵՄ և Հայաստան հարաբերություններում: Հայաստանը ողջունել է իր ընդգրկումը և իր պատրաստակամությունն է հայտնել ամբողջովին ուսումնասիրել դրանով բացվող հնարավորությունները: Այս որոշումից հետո Հայաստան, Ադրբեջան և Վրաստան այցելեց հանձնակատար Պոտոչնիկը և նախագահ Պրոդին՝ համապատասխանաբար 2004թ. հուլիսին և սեպտեմբերին:

2004թ. սեպտեմբերին Հայաստանը և Եվրոպական Հանձնաժողովը համաձայնագիր ստորագրեցին, ըստ որի ԵՀ գրասենյակը Երևանում դարձավ պատվիրակություն:

1.2. Համայնքային աջակցություն

1991թ. ի վեր ԵՅ-ի աջակցությունը Հայաստանին կազմել է ավելի քան 380 միլիոն եվրո: Մարդասիրական աջակցությունը (հիմնականում ԵՅՄԳ և եվրոպական գյուղատնտեսական երաշխիքի և ուղղորդման հիմնադրամի միջոցով EAGGF) կազմել է մոտ 120 միլիոն եվրո և նպաստել է 1990-ականների կեսերի չափազանց խիստ մարդասիրական իրավիճակի մեղմացմանը: TACIS-ի ազգային հատկացումները և Պարենի Ապահովության Ծրագիրը յուրաքանչյուրը ներկայացնում են մոտ 100 միլիոն եվրո: Հայաստանի անկախությունից ի վեր **TACIS** ծրագիրը նպաստել է անցմանը շուկայական տնտեսություն՝ հիմնականում իրավական և կարգավորիչ դաշտերում աջակցության, Հայաստանի օրենսդրությունը ԵՄ-ի հետ մերձեցման և Հայաստանի ԱՅԿ-ի անդամակցությանը աջակցության միջոցով: TACIS-ը նպաստել է նաև Հայաստանի տնտեսական վերականգնմանը՝ մասնավոր հատվածին և միջին ու փոքր ձեռնարկություններին աջակցության միջոցով: Գյուղփոխօգնության բանկը, ֆինանսավորված TACIS և EAGGF պարենի աջակցության համաֆինանսավորման միջոցների հաշվին, բարձր է գնահատվել և նպաստել է գյուղատնտեսական արտադրության բարելավումներին: TACIS աջակցել է նաև միջուկային անվտանգությանը:

2001թ. դեկտեմբերին **Երկրի Ռազմավարական Փաստաթղթի** հաստատումից հետո TACIS աջակցությունը Հայաստանին 2002-2006թթ. ժամանակահատվածում կենտրոնանում է ինստիտուցիոնալ, իրավական և վարչական, ինչպես նաև անցումային փուլի սոցիալական հետևանքների աջակցության վրա: TACIS-ը էական աջակցություն է տրամադրում 2003թ. հաստատված Հայաստանի Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի իրականացմանը: 2002-2003թթ. գործողությունների ծրագիրը (10 միլիոն եվրո) ներկայումս գտնվում է իրականացման փուլում: Վերջերս հաստատվել է 2004-2005թթ. գործողությունների ծրագիրը (նույնպես 10 միլիոն եվրո):

Պարենային Անվտանգության Ծրագիրը (ՊԱԾ) զգալի բյուջետային աջակցություն է տրամադրել Հայաստանի կարևոր գյուղատնտեսական և սոցիալական հատվածներին և այսպիսով կարևոր դերակատարում է ունեցել Հայաստանում աղքատության հաղթահարման գործում՝ հիմնականում ընտանեկան նպաստների և երեխաների հոգածության իր աջակցության միջոցով: Բյուջետային և տեխնիկական աջակցության միջոցով (TACIS տեխնիկական աջակցության հետ միասին) ՊԱԾ-ն հնարավոր է դարձրել հողային բարեփոխումների և պետական ֆինանսական կառավարման բնագավառում նկատելի բարեփոխումները: ՊԱԾ-ի իրականացումը շատ հաջողված է եղել և այսպիսի լրացուցիչ աջակցություն է նախատեսվում 2005-2006թթ. համար (21 միլիոն եվրո)՝ հիմնականում Հայաստանի Աղքատության Հաղթահարման Ռազմավարության իրականացման համար:

1998թ. դեկտեմբերին Հայաստանը փակեց համայնքի հանդեպ իր մնացած պարտքը: Երկիրը օգտվեց նաև նոր **Մակրոֆինանսական Աջակցության** 28 միլիոն եվրո փոխառության և 30 միլիոն եվրո ընդհանուր դրամաշնորհի փաթեթից, որը վճարվեց 1999-2005թթ. ժամանակահատվածում, որպես մակրոտնտեսական կատարողականի և կառուցվածքային բարեփոխումների արդյունք: ԱՄՅ-ի կողմից աջակցվող տնտեսական ծրագրի համատեքստում այս աջակցությունը նպաստել է Հայաստանի արտաքին պարտքի կենսունակությանը:

ԵՅ ժողովրդավարության և Մարդու Իրավունքների Եվրոպական Նախաձեռնության (EIDHR) ծրագիրը սկսեց իր գործունեությունները, որպեսզի 2003թ. Հայաստանում աջակցի ՀԿ-ներին՝ նպատակ ունենալով խթանել և պաշտպանել մարդու իրավունքները և ժողովրդավարությունը, ինչպես նաև հակամարտությունների կանխարգելումն ու կարգավորումը:

1991թ. ի վեր ԵՅ-ի ընդհանուր դրամաշնորհները Հայաստանին (ի լրումն ստորև բերված թվերի Հայաստանը օգտվել է նաև Tacis տարածաշրջանային դրամաշնորհների ծրագիրը)

1991թ. սկսած ԵՄ ընդհանուր դրամաշնորհները Հայաստանին (ի լրումն ստորև բերված թվերի Հայաստանն օգտվում է Tacis տարածաշրջանային ծրագրի դրամաշնորհից)

	1991-1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002-2003	2004-2006	Ընդհանուր (միլ. եվրո)
Tacis ազգային և հատկացումներ	28.90	-	6.00	14.00	-	10.00	-	10.00	-	10.00	20.00	98.90
Միջուկային անվտանգություն	-	-	-	10.00	1.00	-	-	11.00	-	-	7-	29.00
Մարդասիրական	10.40	19.90	23.96	4.97	1.96	1.60	2.30	1.10	2.10	0.5	-	68.79
EAGGF	-	-	34.00	13.20	-	-	-	3.00	-	-	-	50.20
FSP	-	-	-	13.00	6.00	12.00	10.00	10.00	10.00	20.30	21.00	102.30
Մակրո ֆինանսական աջակցություն (վճարված)	-	5.70	-	-	-	8.00	4.00	-	-	11.00	7.00	35.70
Լուսական ֆինանսական ճգնաժամի ազդեցության օգնություն	-	-	-	-	-	-	1.50	-	-	-	-	1.50
Ընդհանուր (միլ. եվրո)	38.30	25.60	63.96	55.17	8.96	31.60	17.80	35.10	12.10	41.80	55.00	386.39

2. Քաղաքական խնդիրներ

2.1. Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն

Հայաստանը նախագահական պետություն է՝ հիմնված իշխանության տարանջատման վրա: Դրա սահմանադրությունը ընդունվել է 1995թ.: **Նախագահը** պետության ղեկավարն է: Նա ընտրվում է ուղղակի քվեով հինգ տարի ժամանակով և կարող է պաշտոնավարել միայն երկու անընդմեջ նախագահական ժամանակահատված: Նա նշանակում և ազատում է վարչապետին և կառավարության այլ անդամներին՝ վարչապետի առաջարկությամբ: Հայաստանն ունի միապալատ խորհրդարան, Ազգային ժողովը, որը բաղկացած է 131 անդամից, որոնք ընտրվում են 4 տարի ժամանակահատվածով, որոնցից 75 ընտրվում են համամասնական, կուսակցական ցուցակներով, իսկ մնացած 56-ը մեծամասնական համակարգով: Նախագահը կարող է ցրել Ազգային ժողովը, բացառությամբ իր պաշտոնավարման վերջին վեց ամիսների ընթացքում: Խորհրդարանական ընտրություններից հետո կառավարության ծրագիրը ներկայացվում է Ազգային ժողովին և կարող է արժանանալ անվստահության քվեի: Վերջին նախագահական ընտրությունները տեղի են ունեցել 2003թ. մարտին, իսկ

խորհրդարանական ընտրությունները նույն տարվա մայիսին: Նախագահական ընտրություններում Նախագահ Քոչարյանը վերընտրվեց երկրորդ (և վերջնական) 5-ամյա պաշտոնավարության՝ ձայների 67.52% մեծամասնությամբ: Խորհրդարանական ընտրություններից հետո նախագահ Քոչարյանը խնդրեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանին կառավարություն ձևավորվել՝ հիմնվելով երեք կուսակցությունների կոալիցիայի վրա (Հանրապետական կուսակցություն, Օրինաց երկիր և Հայ Չեղափոխական Դաշակցություն):

Խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իր վերջնական գեկույցում ԵԱՀԿ/ՕԴԻԻՐ հայտարարեց 2003թ. նախագահական ընտրությունների բարելավում, քարոզարշավի և ՁԼՄ-ների աշխատանքի առումով, բայց բազմաթիվ կարևոր ոլորտներում չէր համապատասխանում ժողովրդավարական ընտրությունների միջազգային ստանդարտներին, մասնավորապես քվեների հաշվման և հաշվարկման գործում: Երկու ընտրությունների վերաբերյալ երկու գեկույցներն էլ մանրամասն առաջարկություններ են ներկայացրել՝ ներառյալ օրենսդրական դաշտի փոփոխությունները, հիմնականում ընտրական օրենսգիրքը և բարելավումներ ընտրական վարչարարությունում: Նախագահական ընտրություններում պարտված թեկնածուն բողոքարկեց քվեարկության երկրորդ փուլի արդյունքները: Սահմանադրական Դատարանը չմերժեց նրա փաստարկները, բայց ընտրության արդյունքները անվավեր չհամարեց: Դատարանն առաջարկեց, որ նորընտիր Ազգային ժողովը և Նախագահը մեկ տարվա ընթացքում «վստահության հանրաքվե» անցկացնեն, բայց վերջինս փոխեց իր դիրքորոշումը: Իր կողմից կառավարությունը այսպիսի հանրաքվեն համարեց Սահմանադրությամբ չնախատեսված: 2004թ. ապրիլին, քանի որ մոտենում էր դատարանի «վերջնաժամկետը», ընդհանույնում ցույցեր կազմակերպեց՝ կոչ անելով հանրաքվեի: Ցույցերի ընթացքում բազմաթիվ վարչական ձեռքարկություններ տեղի ունեցան, մի քանի քաղաքական կուսակցությունների գրասենյակներ խուզարկման ենթարկվեցին և տեղի ունեցան հարձակումներ լրագրողների վրա: Այս միջադեպերի արդյունքում Հայաստանի խորհրդարանական ընդհանույնում խորհրդարանի նիստերը մասնակիորեն բոյկոտեց: Սա խթանեց Սահմանադրության և ընտրական օրենսգրքի վերանայման աշխատանքին: ԵՄ Հարավային Կովկասի Հատուկ Ներկայացուցիչը և այլ միջազգային մարմինները կոչ արեցին ընդհանույնում վերսկսել երկխոսությունը իշխանությունների հետ և ամբողջովին մասնակցել խորհրդարանի աշխատանքներին:

Մարդու իրավունքներին, նախագահ-կառավարություն հարաբերություններին, դատաիրավական համակարգի անկախությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերող հարցերին անդրադարձող **սահմանադրական փոփոխությունների** հանրաքվե տեղի ունեցավ, բայց ցածր մասնակցության պատճառով դրանք չանցան: Ներկայումս սահմանադրական դատարանում քննվում են սահմանադրական բարեփոխումների տարբեր նախագծեր, որոնք կարևոր են մի շարք առանցքային օրենքների իրականացման համար: Եվրախորհուրդը խնդրել է, որ այդ փոփոխությունները ներկայացվեն Վեներտիկի հանձնաժողովի փորձագիտական զննահատմանը:

Հայաստանը բաժանված է 11 մարզերի, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում է կենտրոնական կառավարության կողմից նշանակված մարզպետի կողմից: Երևանը կազմում է մարզերից մեկը և վերջինիս քաղաքապետին առաջարկում է վարչապետը և նշանակում է նախագահը: Յուրաքանչյուր մարզ բաժանված է գյուղական և քաղաքային համայնքների: 2002թ. ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին օրենքը»:

Նույն տարի Հայաստանը վավերացրեց տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան: 2003թ. Եվրախորհրդի զեկույցում ներառված էր, որ տեղական ինքնակառավարումը մնում է շատ թույլ և որ եվրոպական խարտիայի շատ տարրեր մնում են չիրականացված: Պահանջվում է լրացուցիչ կրթություն և վերապատրաստում:

1995թ. սահմանադրության ընդունումից հետո նոր **դատաիրավական համակարգը** ուժի մեջ մտավ 1999թ.: Դատաիրավական կառուցվածքը հիմնված է առաջին ատյանի տարածքային դատարանների և քրեական, քաղաքացիական, տնտեսական ու զինվորական հարցերով վերաքննիչ դատարանների, ինչպես նաև Սահմանադրական Դատարանի վրա: Նոր Քրեական Օրենսգիրքը ընդունվեց 2003թ. և ներկայումս աշխատանքներ են ընթանում Քրեական Դատավարությունների Օրենսգրքի բարեփոխումների ուղղությամբ: Դատավորների կարգավիճակի, դատաիրավական համակարգի և արդարադատության խորհրդի վերաբերյալ օրենքների նախագծերը պետք է հետևեն Սահմանադրության վերանայմանը:

ՀԿ-ները մտահոգություն են արտահայտել դատաիրավական մարմնի անկախության, դատավարությանը նախորդող երկարատև կալանքների, կողմնակալության, անարդյունավետության և կոռուպցիայի առումով: Եվրախորհրդին անդամակցության Հայաստանի պարտավորություններից դատաիրավական համակարգի բարեփոխումների ընդունումն ու իրականացումը դեռ պետք է կատարվեն: Ներկայումս նախագահը հանդիսանում է դատաիրավական մարմնի անկախության երաշխավորը, նախագահում է արդարադատության խորհուրդը և նշանակում է գլխավոր դատախազին:

Քաղաքացիական ծառայության մասին օրենքն ընդունվեց 2001թ.: Օրենսդրության իրականացումն ու կիրառումը դեռ մնում են թույլ և կոռուպցիան համընդհանուր պրոբլեմ է:

Մարդու իրավունքների պաշտպանի (**Օմբուդսմեն**) մասին օրենքը, որը կոչված է պաշտպանել մարդու իրավունքները և կենտրոնական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնյաների կողմից հիմնարար ազատությունների ոտնահարումները, ընդունվեց 2003թ. և Սահմանադրության վերանայման ընթացքի պատճառով ներկայումս սահմանում է, որ Նախագահը և ոչ թե Ազգային ժողովն է նշանակում Օմբուդսմենին: Եվրախորհուրդը խնդրել է Հայաստանի իշխանություններին Օմբուդսմենին արդեն օժտել անհրաժեշտ անկախությամբ:

Կոռուպցիան լուրջ մտահոգություն է մնում: 2004թ. «Transparency International»-ի *Կոռուպցիայի Ընկալման Ինդեքսը* Հայաստանին դասակարգեց 82-րդ տեղում, որը նշանակում է, որ գոյություն ունի կոռուպցիայի ընկալման բարձր մակարդակ: Հայաստանը ստորագրել և վավերացրել է Եվրախորհրդի Կոռուպցիայի Քրեական և Քաղաքացիական Իրավունքի Կոնվենցիաները, բայց չի ստորագրել ՄԱԿ-ի Կոռուպցիայի Դեմ Կոնվենցիան: 2003թ. ընդունվեցին հակակոռուպցիոն ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը և Հայաստանը անդամակցեց Եվրախորհրդի Կոռուպցիայի Դեմ Պետությունների Խմբին (GRECO): Քրեական Օրենսգրքով սահմանված են մի շարք դրույթներ, որոնք քրեականացնում են կոռուպցիան, չնայած որ այս սահմանումների շրջանակը ամբողջովին չի համապատասխանում միջազգային ստանդարտներին: 2004թ. հունիսին Նախագահը հրամանագիր ստորագրեց, որով ստեղծվում է վարչապետի նախագահությամբ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որը պետք է վերահսկի ռազմավարության իրականացումը: 2004թ. հունիսին ՏՀԶԿ-ի Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի

իրավական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրության զեկույցը նշել է, որ կաշառակերության և կոռուպցիայի հետ կապված օրինախախտումների քրեական հետապնդումն ու պատժումը չափից թույլ են՝ կոռուպցիայի ներկայացված մակարդակի համատեքստում:

2.2. Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ

Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնական կոնվենցիաները, բացառությամբ Քաղաքացիական և Քաղաքական Իրավունքների Միջազգային Համաձայնագրի Երկրորդ Լրացուցիչ Արձանագրությունը, Կանանց Դեմ Բոլոր Տեսակի Խտրականությունների Վերացման Կոնվենցիայի Լրացուցիչ Արձանագրությունը և Տանջանքի և այլ Դաժան, Անմարդկային և Նվաստացնող Վերաբերմունքի կամ Պատժի Կոնվենցիայի Լրացուցիչ Արձանագրությունը: 2004թ. այն վավերացրել է Երեխայի Իրավունքների Կոնվենցիայի Լրացուցիչ Արձանագրությունները: Այն վավերացրել է աշխատանքի հիմնական ստանդարտների վերաբերյալ ԱՀԿ-ի ութ կոնվենցիաներից երեքը (կոլեկտիվ բանակցություններ, պարտադրված աշխատանք և հավասար վարձատրություն): Հայաստանն անդամակցեց Եվրախորհրդին (ԵԽ) 2001թ.: Այն կատարել է իր գրեթե բոլոր պարտավորությունները՝ կապված Եվրախորհրդի կոնվենցիաների վավերացման հետ: Սակայն 2003թ. ընտրությունները և 2004թ. ապրիլի դեպքերը մարդու իրավունքների բնագավառում մատնանշում են կարևոր խնդիրների առկայությունը:

Խոսքի ազատության առումով ՁԼՄ-ների, տեղեկատվության ազատության և ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման մասին օրենքները ընդունվեցին 2003թ.: Քրեական Օրենսգրքի փոփոխությունները կատարվել են 2004թ. հուլիսին՝ մասնավորապես ապաքրեականացնելով զրպարտանքն ու վարկաբեկումը: Եվրախորհուրդը և ԵԱՀԿ իրենց վերապահումներն են արտահայտել նոր դրույթների առումով, որոնք թվում է, որ ավելի մեծ պաշտպանություն են տալիս պետական պաշտոնյաներին, քան քաղաքացիներին: Լուրջ մտահոգություններ կան կապված ՁԼՄ-ների անկախության հետ, քանի որ պետական և մասնավոր հեռարձակողների երկու կարգավորիչ մարմինների անդամները նշանակվում են Նախագահի կողմից: Մտահոգություններ են արտահայտվել նաև որոշ հեռարձակման լիցենզիաների շնորհման առումով:

Կրոնական ազատությունների առումով Եհովայի վկաները պետական գրանցում ստացան 2004թ. հոկտեմբերին՝ իրականացնելով Եվրախորհրդի պարտավորությունները: Սակայն այս գրանցումը մերժվել է Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից:

Հավաքների ազատության առումով 2004թ. մայիսին ուժի մեջ մտավ «Հանրահավաքների, ժողովների, երթերի և ցույցերի մասին օրենքը»: Նկարագրելով այն, որպես մի քայլ առաջ, բայց Հայաստանի միջազգային պարտավորությունների հետ ոչ համահունչ՝ Եվրախորհուրդը 9 առաջարկություններ արեց, ինչպես և ԵԱՀԿ-ն: Սահմանադրությամբ պաշտպանված է **միավորումների ազատությունը**: Սակայն այս իրավունքի իրականացման համար միավորումների մասին ոչ մի օրենք չի ընդունվել: Ըստ Եվրախորհրդի ՀԿ-ները սահմանափակվում են իշխանությունների կողմից: Միավորումների ազատության առումով Սահմանադրությունը աշխատավորներին ապահովում է արհեստակցական միություններ ձևավորելու և դրանց միանալու, ինչպես նաև գործադուլների իրավունքը: Գործնականում բարձր գործազրկության և թույլ տնտեսության պատճառով աշխատանքային կազմակերպությունները մնում են թույլ և

կոլեկտիվ բանակցությունները չեն կիրառվում: Միությունները ազատ են միջազգային կազմակերպություններին անդամակցելու համար, սակայն առ այսօր ոչ մեկը դա չի արել:

Վարչական կալանքին վերաբերող դրույթները, որոնք հնարավորություն են տալիս առանց փաստաբանի մինչև 15 օր կալանքի տակ, լայնամասշտաբ կերպով քննադատվել են քաղաքացիական հասարակության կողմից: Միջազգային հանրությունը Հայաստանին կոչ է արել առաջիկայում սրան վերջ դնել:

Տանջանքի և Անմարդկային կամ Նվաստացնող Վերաբերմունքի Կանխարգելման (CPT) Եվրոպական Հանձնախումբը Հայաստան այցելեց 2002թ.: Իր հաշվետվության մեջ, հրապարակված 2004թ., այն եզրակացրեց, որ «Հայաստանում ոստիկանության կողմից իրենց ազատությունից զրկված անձինք ենթարկվում են վատ վերաբերմունքի արժանանալու ռիսկին»: Համաձայն CPT 2001թ. բանտային համակարգի պատասխանատվությունը Ներքին գործերի Նախարարությունից Արդարադատության Նախարարությանը փոխանցելը դրական քայլ է եղել, բայց ազատագրված պայմանները շարունակում են խղճուկ մնալ: Հետևելով ուղղիչ համակարգի բարեփոխումների CPT առաջարկներին՝ 2004թ. հուլիսին ստեղծվեց ուղղիչ հաստատությունների մոնիտորինգի քաղաքացիական հասարակության խորհուրդ:

2003թ. սեպտեմբերի Հայաստանը վավերացրել է **մահապատժի** վերացմանը վերաբերող Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի Արձանագրություն 6 (բայց չի ստորագրել Արձանագրություն 13) և 2004թ. Եվրոպական Սոցիալական Խարտիան:

1999թ. Հայաստանը ստորագրել է **Միջազգային Քրեական Դատարանի** Հռոմի Կանոնադրությունը: Սակայն Սահմանադրական Դատարանը բացասական կարծիք արտահայտեց ազգային օրենսդրության հետ Հռոմի Կանոնադրության համատեղելիության վերաբերյալ, այսպիսով կանխարգելելով վավերացումը՝ կախված Սահմանադրության վերանայման հետ:

Սահմանադրությունը ապահովում է գենդերային հավասարությունը, սակայն զործագրության և աղքատության բարձր մակարդակը խստորեն ազդել է Հայաստանում **կանանց** դիրքի վրա: Համաձայն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայության պաշտոնապես գրանցված զործագուրկների 68% կանայք են: Ընտանեկան բռնությունները և սեռական ոտնձգությունները ընդդեմ կանանց որոշակի մտահոգություններ են առաջացնում: 2004թ. մայիսին Հայաստանն ընդունեց «Կանանց կարգավիճակի բարելավման և հասարակությունում դրանց դերի բարելավման ազգային ծրագիրը»: **Երեխաների** բարեկեցությունը, մասնավորապես կրթության և առողջապահության առումով, լրջորեն ազդվել է Հայաստանի տնտեսական պայմանների պատճառով: ԵՄ-ն ներկայումս աջակցություն է տրամադրում երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում բարեփոխումների աջակցության համար:

1998թ. Հայաստանը վավերացրեց **Ազգային Փոքրամասնությունների** Կոնվենցիան: Համաձայն Եվրախորհրդի առ այսօր ոչ բավարար ուշադրություն և միջոցներ են հատկացվել փոքրամասնությունների լեզվական և մշակութային ժառանգության խթանման համար:

2.3. Արտաքին հարաբերություններ – ընդհանուր

Հայաստանը հանդիսանում է ՄԱԿ-ի, Եվրախորհրդի, Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ), Սևծովյան Տնտեսական Համագործակցության (BSEC), ինչպես նաև ԱՄՅ-ի, Համաշխարհային Բանկի, Եվրոբանկի և ԱՀԿ-ի **անդամ**: Այն հանդիսանում է նաև ՆԱՏՕ-ի Եվրոատլանտյան Համագործակցության Խորհրդի անդամ և մասնակցում է Գործընկերություն Հանուն Խաղաղության ծրագրին: Վերջերս այն դիտորդի կարգավիճակ է ստացել «Organisation Internationale de la Francophonie» կազմակերպությունում և Արաբական Պետությունների Լիգայում:

Հայաստանի տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը բարդ է: Այն ցամաքով շրջապատված երկրի է, որի սահմանները արևմուտքից Թուրքիայի և արևելքից Ադրբեջանի հետ փակ են, որի հիմնական պատճառը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն է: Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնված է «բազմակողմ կոմպլեքսնորմալությանը» հետևելու վրա, երբ երկիրը փորձում է լավ հարաբերություններ պաշտպանել ԵՄ-ի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ: Նրա հարաբերությունների հարևանների հետ պայմանավորված են Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ (*տես 2.4*):

Ռուսաստանը ավանդաբար եղել է Հայաստանի ամենակարևոր դաշնակիցը: Հայաստանը հանդիսանում է Անկախ Պետությունների Համագործակցության անդամ և միացել է Կոլեկտիվ Անվտանգության Համաձայնագրին: Ռուսաստանը մշտական ռազմական ներկայություն ունի Երևանում և Գյումրիում և ապահովում է Հայաստան-Թուրքիա և Հայաստան-Իրան սահմանների, ինչպես նաև Երևանի միջազգային օդանավակայանի սահմանապահ ուժերի մեծ մասը: Ռուսաստանը Հայաստանում ունի նաև զգալի տնտեսական դերակատարում: Իր մեծածավալ էներգետիկ պարտքերը մարելու համար Հայաստանը իր էներգետիկ ենթակառուցվածքների մեծ մասը վաճառեց Ռուսաստանին և 2003թ. ստորագրեց հինգ տարվա (երկարաձգման ենթակա) համաձայնագիր, որով Ռուսական պետական ՌԱՕ ԵԷՍ ընկերությանը փոխանցեց Մեծամորի Ատոմակայանի ֆինանսական կառավարումը:

Ռուսաստանի մեկ միլիոնանոց հայկական սփյուռքի դրամական փոխանցումները առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում աղքատ գյուղական ընտանիքների համար:

Հայաստանն օգտվում է մեկ շնչին ընկնող ԱՄՆ աջակցության ամենաբարձր մակարդակներից՝ ֆինանսավորելով կարևոր կապիտալ ծախսերի ծրագրերը, հիմնականում ենթակառուցվածքը՝ ի լրումն էական դրամական փոխանցումների: Հայաստանը վերջերս որակավորվեց Հազարամյակի Մարտահրավերների Հաշվի միջոցով ԱՄՆ-ից լրացուցիչ ֆինանսավորում ստանալու համար և ներկայումս մշակում է իր առաջարկությունները:

Հայաստանը ողջունեց 2004թ. մայիսին **ԵՄ** ընդլայնումը և իր ընդգրկումը Եվրոպական Հարևանության Քաղաքականությունում 2004թ. հունիսին: Շնորհիվ Ֆրանսիայի էական հայ համայնքի Հայաստանը լավ հարաբերություններ է պահում վերջինիս հետ և կարևոր առևտրային հարաբերություններ ունի Հունաստանի հետ:

Հյուսիսում գնտվող **Վրաստանը** եղել է Հայաստանի հիմնական ճանապարհը և երկաթուղային մուտքը դեպի արտաքին աշխարհ: Շեվարդնաձեի ժամանակաշրջանում համագործակցությունը Վրաստանի հետ եղել է դժվար և ավելի է բարդացել նկատելի հայ

փոքրամասնության առկայությամբ, որը գտնվում է ծայր աստիճան աղքատ տարածքում և տնտեսապես գրեթե ամբողջովին կախված է Ախալքալակի ռուսական ռազմական բազայից, որը Վրաստանը կոչ է անում հանել իր երկրից համաձայն 1999թ. ԵԱՀԿ Ստամբուլի գազաթնաժողովի:

Հայաստանը մեծ ջանքեր է գործադրել **Իրանի**, որպես այլընտրանքային տրանսպորտային ճանապարհ և էներգետիկայի այլընտրանքային աղբյուր, հետ իր հարաբերությունները զարգացնելու համար: Հայաստանի ցամաքային առևտրի 20% հիմա անցնում է Իրանի սահմանով: 2004թ. մայիսին Հայաստանն ու Իրանը երկու պետությունների միջև գազատարի կառուցման համաձայնագիր ստորագրեցին: Համագործակցություն կա նաև Արաքս գետի վրա հիդրոէներգետիկ էներգիայի բնագավառում:

Հայաստանի հարաբերությունները **Թուրքիայի** հետ առանձնահատուկ բարդ են՝ պայմանավորված 1915թ. ողբերգական դեպքերի յուրաքանչյուր պետության մեկնաբանության կապակցությամբ երկարամյա տարածայնություններով: Լեռնային Ղարաբաղի պատերազմից սկսած թուրք-հայկական սահմանը մնում է փակ և դիվանագիտական հարաբերություններ չկան: Վերջերս որոշ կապեր են եղել Արտաքին գործերի նախարարների միջև և Հայաստանի խորհրդականների մի խումբ վերջերս այցելեց Թուրքիա: Երկու պետությունների միջև մնում են որոշ չլուծված հարցեր, որոնց պետք է անդրադառնալ փոխադարձ հարաբերությունների բարելավման տեսանկյունից:

Հայաստանը հանդիսանում է ՄԱԿ-ի Փոքր Սպառազինությունների Ապօրինի Առևտրի Կանխարգելման, Պայքարի և Վերացման Ծրագրի (UNPoA) բոլոր բնագավառների անդամ: Չնայած, որ այն շատ է ազդվել ցամաքային ականներից, առանց հուսալի թվերի, սակայն այն դեռ չի անդամակցել հակահետիոտնային ականների օգտագործման, պահուստավորման, արտադրության և փոխանցման ու դրանց վերացման 1997թ. Օտտավային կոնվենցիային՝ մասնակիորեն տարածաշրջանային խնդիրների պատճառով:

Հայաստանը Սովորական Սպառազինությունների Կոնվենցիայի (CCW) անդամ չէ, բայց նշել է, որ դիտարկում է ցամաքային ականներին վերաբերող Արձանագրություն II-ին միանալու հարցը:

Ի պատասխան 2001 սեպտեմբերի 11-ի դեպքերի ԱՄՆ ռազմական աջակցությունը վերսկսվել է, բայց ընդհանուր առմամբ Հայաստանը փոքր նշանակության դերակատարում է ունեցել **ահաբեկչության դեմ պայքարում**: Հաշվի է առնվել հարաբերությունները Ռուսաստանի և Իրանի հետ, Իրաքում և ընդհանուր առմամբ Միջին Արևելքում հայկական համայնքները և և այն փաստը, որ Երևանը գտնվում է Բաղդատից ընդամենը 750 կմ հեռու: Հայաստանը նվիրված է միջազգային շրջանակներում ահաբեկչության դեմ պայքարին և գտնվում է ահաբեկչության դեմ պայքարի իր ներքին օրենսդրությունը միջազգային ստանդարտներին հետ համապատասխանեցման գործընթացում: Եվրախորհրդին է ներկայացվել ահաբեկչության դեմ պայքարի օրենքի նախագիծը:

2.4. Տարածքային հակամարտություններ և այլ հակամարտություններ/վեճեր

Էթնիկ լարվածությունը **Լեռնային Ղարաբաղի** հարցի շուրջ մեծացավ 1988-1991: 1991թ. Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև այդ

տարածաշրջանի հարցի շուրջ պատերազմ սկսվեց: 1994թ. պատերազմից հետո երկու երկրները համաձայնվեցին զինադադարի, որը հանդիսացավ ավելի քան 30,000 մարդու մահվան և երկու կողմից բազմաթիվ փախստականների ի հայտ գալու պատճառը: Ադրբեջանցի փախստականների և Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, կից օկուպացված տարածքներից ներքին տեղահանված մարդկանց (IDPs) քանակը գնահատվում է 800,000 և Ադրբեջանից հայ փախստականների քանակը՝ 300,000: Ադրբեջանի տարածքի որոշ հատվածներ մնում են Հայաստանի զբաղեցման/օկուպացման տակ: Չնայած, որ 1994թ. գործում է զինադադար, ամեն տարի բազմաթիվ միջադեպեր են գրանցվում «կոնտակտային գծի» երկայնքով. միայն 2004թ. ավելի քան 30 մահացու դեպքեր են գրանցվել:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում Ադրբեջանը չի ցանկանում Հայաստանի հետ ոչ մի տեսակ համագործակության գնալ՝ երկկողմանի կամ միջազգային կազմակերպությունների շրջանակում: Ընդհանուր առմամբ Հարավային Կովկասում շատ քիչ տարածաշրջանային համագործակցություն կա:

1992թ. ի վեր Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (ԵԱՀԿ) եղել է միջնորդային ջանքերի առաջնահերթ ֆորումը՝ ղեկավարվող ԵԱԿՅ անդամների խմբով, Մինսկի խումբ, որը համադեկավարվում է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կողմից: Հայաստանի և Ադրբեջանի Նախագահների միջև երկխոսության արդյունքում 2001թ. բարձրաստիճան հանդիպում տեղի ունեցավ ԱՄՆ-ում, որը փակուղուց դուրս չբերեց իրավիճակը:

2003թ. երկու երկրներում ընտրություններից հետո երկխոսությունը վերսկսվեց: Հայաստանի և Ադրբեջանի Արտաքին գործերի Նախարարները պարբերաբար հանդիպում էին այսպես կոչված Պրահային գործընթացի համատեքստում: Նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Իլհամ Ալիևը երկարատև երկկողմանի քննարկումներ ունեցան 2004թ. սեպտեմբերին Աստանայում (Ղազախստան) ԱՊՀ զագաթնաժողովի շրջանակներում: Մինսկի խմբի համանախագահները շարունակում են աջակցություն տրամադրել կողմերին իրենց երկխոսությունում: Եվրոմիությունը, ներառյալ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը, շարունակում է ամուր քաղաքական աջակցություն ցույց տալ ԵԱՀԿ մինսկի խմբի միջնորդական ջանքերին:

2.5. Արդարադատություն և ներքին գործեր

1988թ. Հայաստանի երկրաշարժը, Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած տնտեսական հետևանքները և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը արդյունք հանդիսացան մեծածավալ արտագաղթի համար և Հայաստանի բնակչությունը վերջին 10-15 տարիների ընթացքում նվազեց մոտ 1 միլիոնով և նեկայումս կազմում է մոտ 3 միլիոն: Արտագաղթի առումով Հայաստանից հիմնականում գնում են Արևմտյան Եվրոպա և ավելի քիչ դա օգտագործում են, որպես տարանցիկ գոտի:

Հայաստանում հաշվարկված մոտ 251,000 **փախստականների** մեծ մասը էթնիկ հայեր են՝ տեղահանված հարևան երկրներից հակամարտությունների պատճառով, ներառյալ Լեռնային Ղարաբաղը, Չեչնիան և Աբխազիան: 1993թ. Հայաստանը միացավ 1951թ. Փախստականների Կարգավիճակի Ժնևյի կոնվենցիային և դրա Արձանագրությանը և 1999թ. փախստականների մասին օրենք սահմանում է Հայաստանում ապաստանի ընդհանուր շրջանակները: Սույն օրենքի փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2004թ. ապրիլին այն ավելի է համապատասխանեցրել միջազգային ստանդարտներին: Չնայած որ, փախստականներին այս օրենքով տրվում է հատուկ հիմարար սոցիալական

և տնտեսական իրավունքներ, սակայն իրենց ինտեգրացիան դեռ խնդրահարույց է մնում: Հայաստանը **վերընդունման համաձայնագրեր** ունի ի շարք այլոց Լիտվայի և Ռուսաստանի հետ:

Ոստիկանական ուժը մնում է Ներքին գործերի Նախարարության պատասխանատվությունը: Այն նվազող բյուջե ունի և դրան պակասում է ժամանակակից սարքավորումներ: Ոստիկանական բարեփոխումները (մասնավորապես մասնագիտական վերապատրաստումը հետաքննչական ժամանակակից մեթոդներում) սահմանվել են որպես առաջնահերթություն՝ մասնավորապես Տանջանքի Կանխարգելման Եվրախորհրդի Հանձնաժողովի կողմից: ԵԱՀԿ-ն նախատեսում է աջակցության ծրագիր Հայաստանի ոստիկանության համար՝ ուղղված ոստիկանության և հասարակության միջև վստահության ձևավորմանն ու համայնքահեն ոստիկանական մոդելի մշակման աջակցմանը:

Միջազգային **դատաիրավական համագործակցության** առումով Հայաստանը վավերացրել է 1957թ. Արտաքսման Եվրոպական Կոնվենցիան և 1959թ. Քրեական Գործերով Փոխադարձ Օգնության Եվրոպական Կոնվենցիան, ինչպես նաև դրա 1978թ. Լրացուցիչ Արձանագրությունը: Այն չի ստորագրել Քրեական Գործերով Փոխադարձ Օգնության Երկրորդ Արձանագրությունը և չի հանդիսանում 1980թ. Երեխաների Առևանգման Հաագայի Կոնվենցիայի անդամ:

Հայաստանը հանդիսանում է սեռական շահագործման համար կանանց և աղջիկների **թրաֆիկինգի** սկզբնական և տարանցիկ երկիր, հիմնականում դեպի Միացյալ Արաբական Էմիրություններ և Թուրքիա, ինչպես նաև Ռուսաստան և Եվրոպական երկրներ: Թրաֆիկինգը Ռուսաստան, Թուրքիա և ՄԱԷ աշխատանքային շահագործման համար գնալով լուրջ խնդիր է դառնում: 2003թ. Քրեական Օրենսգրքը քրեականացրեց անձանց թրաֆիկինգը և 2004թ. հունվարին Հայաստանի կառավարությունն ընդունեց մարդկանց թրաֆիկինգի կանխարգելման գործողությունների ծրագիրը:

Հայաստանը **թմրանյութերի** արտադրության խոշոր երկրի չէ և ներքին չարաշահման մակարդակը համեմատաբար ցածր է: Խղճուկ ենթակառուցվածքը Հայաստանին դարձնում է թրաֆիկինգի երկրորդական ուղի: Հայաստանը ստորագրել է թմրանյութերի վերաբերյալ ՄԱԿ Կոնվենցիաները (1961թ., 1971թ. և 1988թ.) և 2003թ. ընդունեց «Թմրանյութերի և հոգեմետ նյութերի մասին օրենքը»: ԵՄ ֆինանսավորում է SCAD (Թմրանյութերի Հարավային Կովկասի Գործողությունների Ծրագիրը)՝ հերոինի ճանապարհին գտնվող երեք տարածաշրջանային ծրագրերից մեկը:

2003թ. Հայաստանը վավերացրեց **Միջսահմանային Կազմակերպված Հանցագործության** դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիան և մարդկանց թրաֆիկինգի և միգրանտների մաքսանենգության հետ կապված դրա արձանագրությունները: Այն չի ստորագրել Հրազդեհի Ապօրինի Արտադրության և Թրաֆիկինգի դեմ պայքարի արձանագրությունը:

Հայաստանի տնտեսությունը դեռ մեծապես կանխիկի վրա է հիմնված, բայց գործազրկության բարձր մակարդակը, ցածր աշխատավարձերը, կոռուպցիան և մեծածավալ ստվերային տնտեսությունը նպաստում են **փողերի լվացման** հանդեպ դրա խոցելիությանը: Խաղատները տարածվում են: Երևանի անմիջական հարևանությամբ կա 30 խաղատուն: 2003թ. ի վեր առաջընթաց է գրանցվել, օրենսդրությունը և կառուցվածքային կարողությունները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար, մասնավորապես առևտրային բանկային

գործունեության վերահսկման առումով: 2003թ. Հայաստանը վավերացրեց ԵՄ Հանցագործության Եկամուտների Լվացման, Խուզարկման, Առգրավման և Բռնագրավման Կոնվենցիան: Հայաստանը հանդիսանում է նաև Եվրախորհրդի Փողերի Լվացման Դեմ Պայքարի Միջոցառումների Գնահատման Փորձագետների Ընտրյալ Հանձնաժողովի (MONEYVAL) անդամ: Քրեական Օրենսգիրքը, «Բանկերի և բանկային գործունեության մասին օրենքը» և Կենտրոնական Բանկի կանոնակարգերը պարունակում են դրույթներ, որոնք արգելում են փողերի լվացումը և պահանջում են, որ ֆինանսական հաստատությունները ստուգումներ իրականացնեն որոշակի շեմքից բարձր ավանդների հանդեպ: Ակնկալվում է, որ 2005թ. սկզբին կրնա լինի «Փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման մասին օրենքի» նախագիծը, որով սահմանվում է ֆինանսական հետախուզության բաժնի ստեղծումը:

3. Տնտեսական և սոցիալական իրավիճակը

3.1. Սակրոտնտեսական և սոցիալական ակնարկ

3.1.1. Վերջին տնտեսական զարգացումները և ակնարկ

Հայաստանը փոքր բաց տնտեսություն է մոտ 3 միլիոն բնակչությամբ և անվական ՀՆԱ մակարդակը 2003թ. կազմել է 2.8 միլիարդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող 950 ԱՄՆ դոլար (3,770 ԱՄՆ դոլար գնողականության առումով) ՋԻՆ-ի գործակցով՝ Հայաստանը մտնում է միջինից ցածր եկամտի երկրների խմբի մեջ: Իրական ՀՆԱ-ի աճը արագացել է 1999թ. ի վեր՝ հասնելով ռեկորդային 13.9% 2003 թվականին: ՀՆԱ-ի կառուցվածքը փոխվեց, քանի որ շինարարությունն ու առևտուրը վերականգնվեցին, որոնք աջակցվում էին դրամական և այլ մասնավոր փոխանցումներով, մինչդեռ գյուղատնտեսությունը նվազեց համեմատական պայմաններով (բայց դեռ կազմում է ՀՆԱ-ի 21.5%՝ արդյունաբերության հավասար): Արդյունաբերական արտադրանքը օժանդակվում է հանքային, մետալուրգիական, ադամանդագործության և սննդավերամշակման ոլորտներում նոր ներդրումներով: Շարունակվող հզոր տնտեսական աճի հետ մեկտեղ, ակնկալվում է, որ 2005թ. Հայաստանը կհասնի անցումային փուլին նախորդող (1990թ.) իրական ՀՆԱ-ի մակարդակին:

Ջրոսաշրջությունն ու տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները կառավարության կողմից սահմանվել են, որպես պոտենցիալ նոր աճի ոլորտներ, բայց էական նոր ներդրումներ դեռ պետք է կատարվեն:

Ընդհանուր երկկողմանի առևտրի ամբողջական օգուտներ դեռ ձեռք չեն բերվել: Ադրբեջանի և Թուրքիայի հետ փակ սահմանները, ինչպես նաև տրանսպորտի և հաղորդակցման խղճուկ ենթակառուցվածքները այս ցամաքով շրջապատված երկրի տնտեսական զարգացման համար լուրջ խոչընդոտներ են: Համաձայն Համաշխարհային Բանկի գնահատականների այս սահմանափակումները ուղղակի (փոխադրման ոչ նորմալ բարձր գներ) կամ անուղղակի (օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ընկալված բարձր ռիսկայնություն) 2003թ. ՀՆԱ-ին պատճառեցին 10-18% վնաս: 2004թ. իր առևտրային դեֆիցիտի ֆինանսավորման համար Հայաստանը շարունակեց հույս դնել արտաքին աջակցության և աշխատողների դրամական փոխանցումների վրա: 1999-2002թթ. սպառողական գների սղաճը պահվել է Հայաստանի Կենտրոնական Բանկի (ՀԿԲ) թիրախային 3%-ից ցածր: Սակայն 2003թ. վերջում տարեկան սղաճի

մակարդակը մեծացել է մինչև 8.6%՝ հիմնականում ցորենի ներմուծման բարձր գների պատճառով: Սղաճի ճնշումը շարունակվեց 2004թ., և նորից հիմնականում սննդի գների և որոշ սակագների ավելացման միջոցով:

Աղյուսակ. Հայաստան – ընտրված տնտեսական ցուցանիշներ 2000-2004թթ.

	2000	2001	2002	2003	2004*
Իրական ՀՆԱ աճ (%)	6.0	9.6	13.2	13.9	10.1
Անվանական GDP (միլիարդ դրամ)	1.031	1.176	1.363	1.623	1.970
Սպառողական գների սղաճ (% , ժամանակահատվածի միջինը)	-0.8	3.1	1.1	4.7	7.0
Գործազրկության մակարդակ (գրանցված)	11.7	10.4	10.8	10.1	9.4
Աղքատության աստիճան (բնակչության %)	չկա	50.9	49.7	42.9	43
Ֆիսկալ հաշվեկշիռ (ՀՆԱ %, կանխիկի բազա)	-4.6	-4.0	-2.6	-1.5	-1.3
Լայն գումարներ (% վճար)	38.6	4.3	34.0	10.4	15.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում (ՀՆԱ %)	23.3	25.5	29.4	32.2	29.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում (ՀՆԱ %)	50.5	46.1	46.6	50.1	44.3
Ընթացիկ հաշվապահական հաշվեկշիռ (ՀՆԱ %)	-14.5	-9.5	-6.2	-6.8	-5.6
Համախառն միջազգային պահուստներ (արտահանման ամիսներ)	3.8	3.6	3.7	4.0	3.7
Արտաքին պետական պարտք (ՀՆԱ %)	45.0	43.2	44.0	38.3	31.3
Արտաքին պարտքի սպասարկում (արտահանման %)	10.8	9.7	9.5	7.2	6.8
Ներքին պետական պարտք (ՀՆԱ %)	չկա	2.1	2.6	2.6	2.4

Աղբյուրներ՝ ԱՄՀ, Եվրոստատ

* Կանխատեսում

3.1.2. Ֆիսկալ կառավարում, դրամական և փոխանակման կուրսի քաղաքականություն

Ընդհանուր ֆիսկալ հաշվեկշիռը քայքայվեց 1990-ականների վերջերին՝ 1999թ. հասնելով 7.2%, բայց դրանից հետո 2000-2003թթ. նվազեցվել է 2%: Միաժամանակ ծախսային ապառքները վճարվել են: Էներգետիկ, ինչպես նաև ջրամատակարարման և ոռոգման ոլորտներում կվազի ֆիսկալ դեֆիցիտը նույնպես նվազեցվել է ՀՆԱ-ի մոտ 0.4 %: Հարկային և մաքսային վարչարարության մշտական թուլության պատճառով փաստացի և պոտենցիալ հավաքագրումներում մեծ ճեղքված է մնում: ՀՆԱ-ի տոկոսի համեմատությամբ հարկային եկամուտները համեմատաբար ցածր են, ՀՆԱ-ի 15%-ից ցածր և չնայած հզոր տնտեսական աճի հարկային հավաքագրումները ՀՆԱ-ի հետ համեմատությամբ 2003թ. փաստացիորեն նվազել են մինչև 14.1%: Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրում (ԱՀՌԾ) կառավարությունը հարկային հավաքագրումները նախատեսել է ՀՆԱ-ի 16.2% մակարդակ մինչև 2006 (տես 3.3):

Լավ առաջընթաց է գրանցվել Միջնաժամկետ Ծախսային Ծրագրի ուղղությամբ, բայց ԵՀ-ի կողմից կատարված վերջին ուսումնասիրությունները կառավարությանը քաջալերում են շարունակել ամբողջ բյուջետային համակարգի բարեփոխումները (պլանավորում, բյուջետավորում, հաշվապահություն, գանձապետական կառավարում և ներքին ու արտաքին աուդիտներ): Վերջին ֆիսկալ ապակենտրոնացման բարեփոխումները պետք է զգուշորեն գնահատվեն ֆիսկալ հաշվետվողականության առումով, որպեսզի ապահովեն դրա հաջող իրականացումը:

ՀԿԲ-ն ներկայումս իրականացնում է ողջամիտ դրամական քաղաքականություն: 1993թ. Հայաստանը ներդրեց իր ազգային արժույթը, *դրամը*, որին թույլ տրվեց լողալ՝ ՀԿԲ-ի նվազագույն միջամտությամբ: *Դրամը* աստիճանաբար արժեքազրկվեց և՛ անվակական, և՛ արդյունավետ առումով մինչև 2004թ., երբ հակադարձ միտում գրանցվեց՝

պայմանավորված փոխանցումների ուժեղ ներհոսքով: Ընթացիկ միջազգային գործարքների հանդեպ փոխանակման ոչ մի սահմանափակում չի կիրառվում: ԱՄՅ-ն և ԵՅ-ն գտել են, որ հզոր կառավարման ապահովման երաշխիքները ընդհանուր առմամբ պատշաճ են ՅԿԲ-ում:

3.1.3. Արտաքին իրավիճակը

Վերջին տաս տարիների ընթացքում Հայաստանի առևտրային հոսքերի պրոգրեսիվ վերուղղվածություն է նկատվել, քանզի ԱՊՀ երկրների արտահանման և ներմուծման բաժինը նվազել է համապատասխանաբար 19 և 24 տոկոսների 2003թ. (81 և 66 տոկոսներից 1993թ.): Հայաստանը մեծապես կախված է սննդամթերքի, ինչպես նաև էներգիայի ներմուծման վրա և հետևաբար ունի մեծ առևտրային դեֆիցիտ, որը սակայն 1990-ականների վերջերի 30%-ից նվազել է մինչև 20%-ից պակաս 2003թ.:

1998թ. Ռուսական ֆինանսական ճգնաժամի ժամանակ ընթացիկ հաշվի դեֆիցիտը հասավ ՀՆԱ-ի 21%, բայց հետագայում նվազեց մինչև մոտ 7% (2003թ.): Առևտրային դեֆիցիտը մասնակիորեն հաշվանցվում է դրամական փոխանցումների և արտաքին աջակցության միջոցով: Դրամական և մասնավոր փոխանցումները Հայաստանում պահանջարկի աջակցման էական գործոններ են՝ կազմելով միջինը ՀՆԱ-ի մոտ 11% վերջին տարիներին: Ներսում ադամանդների մշակումը դարձել է առևտրային հոսքերի նկատելի ոլորտ (և արտահանման, և ներմուծման համար): Տնտեսության երկարաժամկետ արտաքին կենսունակությունը հզորացնելու համար արտահանման ավելի մեծ դիվերսիֆիկացիա կպահանջվի: ՅԿԲ-ի համախառն միջազգային պահուստները հարմար մակարդակի վրա են՝ ներմուծումների մոտ չորս ամսվա չափով:

2003թ. Ռուսաստանի հետ պարտքի նվազեցման համաձայնագրերի կնքումից հետո Հայաստանի արտաքին պարտքը դարձել է ավելի կառավարելի: Պետական և պետության կողմից երաշխավորված արտաքին պարտքը ընդհանուր առմամբ կազմել է 1.1 միլիարդ դոլար 2004թ. վերջում (ՀՆԱ-ի 31%, 1999թ. 46%-ից նվազեցված): Ավելին, պարտքի պահուստը կազմված է հիմնականում բազմակողմանի աղբյուրներից ստացված արտոնյալ պայմաններով փոխառություններից (90%):

3.1.4. Սոցիալական իրավիճակը և մարդկային զարգացման քաղաքականությունները

Տնտեսական աճը սկսել է ազդեցություն ունենալ աղքատության ցուցանիշների վրա: **Աղքատության** գծից ներքև ապրող բնակչության համամասնությունը 1998/1999թթ. 56%-ից նվազեց մինչև 49% 2001/2002թթ. և ծայրահեղ աղքատության բաժինը 26%-ից մինչև 17%: 2003թ. մատչելի տվյալները մատնանշում են, որ աղքատության նվազեցման դրական միտումը շարունակվել է: Մարզային անհավասարությունները ընդլայնվել են, սակայն քանի որ կենսամակարդակի բարձրացումը կենտրոնացված է մայրաքաղաքում, ապա այլ մարզերը հիմնականում ետ են մնում: Բնակչության մոտ 5% դեռ բնակվում է ժամանակավոր կացարաններում (փախստականներ և 1988թ. երկրաշարժի տուժածներ): Չնայած 2000թ. ի վեր տնտեսական աճի գործազրկության մակարդակը բարձր է: Պաշտոնապես գրանցված գործազրկությունը մոտ 10% է, բայց տնային տնտեսությունների հետազոտությունները մատնանշում են, որ գործազրկության մակարդակը 25-30% է՝ հիմնականում կենտրոնացված գյուղական վայրերում:

Համաձայն Համաշխարհային Բանկի գնահատականների, հավանական է, որ Հայաստանը գենդերային և կրթական հարցերով բավարարի Հազարամյակի

Չարգացման Նպատակներին, բավարարի աղքատության նվազեցման, վարակային հիվանդությունների և շրջակա միջավայրի կենսունակության հարցերին, բայց հավանական չէ, որ կբավարարի մանկական մահացության և մայրական առողջության հարցերին: Հայաստանը համեմատաբար լավ է համեմատվում 1990թ. եկամտի նույն մակարդակն ունեցող ոչ-անցումային երկրների հետ և հետևաբար ՀՉՆ-ի առումով առաջնային մարտահրավերն է վերականգնել հիմնական առողջապահական և կրթական ծառայությունները այսօրվա տնտեսական միջավայրում:

Ընդհանուր զբաղվածության մոտ 70% պատկանում է ինքնազբաղվածությանը՝ փոքր ձեռնարություններ և գյուղատնտեսություն (հիմնականում ոչ ֆորմալ տնտեսությունում): Գնահատվել է, որ ոչ ֆորմալ տնտեսությունը կազմում է համախառն ազգային արտադրանքի մոտ 46%: Եկամտի անհավասարությունների մակարդակները համեմատաբար բարձր են, չնայած որ անկման միտում ունեն 1990-ականների վերջից, ինչպես չափվում է ՋԻՆ-ի գործակցով (0.434 2003թ.): Սպառողական հետազոտությունների հիման վրա ՋԻՆ-ի ավելի ցածր գործակից (ավելի ցածր անհավասարություն) է գնահատվել (0.27 2002թ., շատ թե քիչ անփոփոխ սկսած 1998/99թ.):

1990-ականների սկզբի արտագաղթը արմատապես փոխեց Հայաստանի ժողովրդագրական և աշխատուժի իրավիճակը: Մոտ մեկ միլիոն մարդ կամ բնակչության մոտ 25% հեռացան երկրից: Նպաստելով Հայաստանում սպառնանք մասնավոր դրամական փոխանցումների միջոցով՝ արտագաղթի արդյունքում մեծացավ բնակչության տարիքը, գեղերային անհավասարակշռությունը և որակյալ աշխատուժի կորուստը: Տեղի ունեցավ ծնելիության կտրուկ նվազում 1989թ. 1000 բնակչի հաշվով 21.6-ից մինչև 10.1 2002թ., մինչդեռ նույն ժամանակահատվածում մահացության աստիճանը մեծացավ 1000 բնակչի հաշվով 6.5-ից 8: Բնակչության մոտ երկու երրորդը ապրում է քաղաքային վայրերում: Միայն մայրաքաղաք Երևանում բնակվում է ընդհանուր բնակչության մոտ մեկ երրորդը:

2003թ. օգոստոսին Հայստանը ընդունեց **Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագիրը** (ԱՀՌԾ), որը հիմնված է միջնաժամկետ հատվածում իրական ՀՆԱ-ի 6% աճի ենթադրության վրա: Վերահատկացման վրա կենտրոնացման հիմնական հարցերի պատճառով ռազմավարությունը անդրադառնում է ապագա տնտեսական աճի կենսունակության և ռեսուրսների վրա՝ բավականին ընդհանուր մակարդակով: Նոր փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են աղքատության նվազեցման թիրախների առանցքը: Մինչդեռ ժամանակ պետական հատվածի շարունակվող արդիականացումը պետք է բոլոր քաղաքացիներին ավելի լավ մատչելիության հնարավորություն տա: ՀՆԱ-ի համեմատությամբ կառավարության ընդհանուր ծախսերը անկման միտում ունեն (19% 2003թ.), քանի որ եկամտի պոտենցիալը չի իրականացվել, չնայած, որ ԱՀՌԾ-ն նախատեսում է տարեկան 14% աճ 2004-2015թթ. ժամանակահատվածում:

Սոցիալական փոխանցումները կազմում են ՀՆԱ-ի ընդհանմենը 4.5%: Կենսաթոշակների ներկայիս մակարդակը նվազագույն ապրուստի մակարդակից ցածր է: ՀԿԲ-ն նախնական առաջարկություններ է ներկայացրել Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների համար, բայց լայնածավալ առողջ տնտեսական աճ կպահանջվի կենսունակ հենքի վրա Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման համար:

Առողջապահության և կրթության պետական ծախսերը վերջին տարիներին մնացել են ցածր մակարդակների վրա (համապատասխանաբար ՀՆԱ-ի մոտ 1.2 և 2.2% 2002թ.): Թերֆինանսավորման պատճառով ֆիզիկական ենթակառուցվածքների քայքայումը կրթական ոլորտում ակնհայտ է եղել: ԱՅԴ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կրթության որակի ապահովման վրա, որպեսզի ավելի լավ բավարարվեն գործատուների պահանջները: Առողջապահության ոլորտում գնահատվում է, որ մասնավոր ֆինանսավորումը (հիմնականում ոչ ֆորմալ վճարումներ) կազմում է ընդհանուր առողջապահական ֆինանսավորման երկու-երրորդը: Առողջապահական համակարգը ապակենտրոնացվել է և ավելի շատ պատասխանատվություն է տրվել ֆինանսների կառավարման համար: ԱՅԴ-ն առողջապահական ոլորտը սահմանել է, որպես հիմնական առաջնահերթություն և 2004-2007թթ. համար պետական ֆինանսավորման էական աճ է նախատեսում՝ նպատակ ունենալով հասնելու ՀՆԱ-ի 2.5%-ին մինչև 2015թ.:

3.1.5. Կայուն զարգացում

Կայուն զարգացման հետ կապված ներկայումս մշակվում են Կայուն Ջարգացման Ազգային Հայեցակարգային Փաստաթուղթը և Ռազմավարությունը: Հաշվի առնվող հիմնական տարրերն են հողի և անտառի քայքայումը, ջրային պաշարների և աղբի կառավարումը, Սևանա լճի մակարդակի վերականգնումը, կենսաբազմազանությունը, լեռնային գոտիները, ինչպես նաև կրթությունն ու հասարակական իրազեկությունը: 2002թ. կառավարությունը ստեղծեց Կայուն Ջարգացման Ազգային Խորհուրդ: Դրա խնդիրն է հզորացնել կայուն զարգացման միջոլորտային համագործակցությունը և խթանել տարբեր ոլորտների քաղաքականություններում բնապահպանական դիտարկումների ինտեգրացիան: Խորհուրդը բաղկացած է տարբեր նախարարությունների և գերատեսչությունների, Ազգային Ժողովի, ՀԿ-ների, երիտասարդական և գործարար ոլորտի ներկայացուցիչներից:

3.2. Կառուցվածքային բարեփոխումներ և առաջընթաց դեպի գործող և մրցակցային շուկայական տնտեսություն

3.2.1. Տնտեսության և մասնավորեցման մեջ պետական ներգրավածությունը

ՀՆԱ-ի մոտ 75% արտադրվում է մասնավոր հատվածի կողմից: Գործարար կենսունակ պետական ձեռնարկությունները (ՊՁ-եր) հիմնականում արդեն սեփականաշնորհվել են (մոտ 7230 փոքր ձեռնարկություններ և մոտ 1890 փոքր և մեծ ձեռնարկություններ 2004թ. կեսի դրությամբ): Հետևաբար կառավարությունը նույնպես սկսել է ուշադրություն դարձնել այն ոչ կենսունակ ՊՁ-երի օտարման գործընթացին, որոնք դեռ չեն սեփականաշնորհվել: Հաշվի առնելով ոչ նպաստավոր աշխարհագրական վիճակը, տեղական շուկայի փոքր ծավալը և գործարար կլիմայի հետ կապված ընկալված ռիսկերը՝ Հայաստանը դանդաղ առաջընթաց է կատարել մնացյալ պետական ձեռնարկությունների համար ռազմավարական ներդրողներ ներգրավելու համար, որոնք ենթակա են սեփականաշնորհման:

Հողային բարեփոխումներն իրականացվեցին անցումային վաղ փուլում և 1994թ. դրությամբ գյուղատնտեսական հողի մոտ 90% սեփականաշնորհվեց: Մասնավոր գյուղացիական տնտեսությունները փոքրածավալ են (հիմնականում սեփական սպառման գյուղատնտեսություն) և գործող հողի շուկայի, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների մեծածախ շուկայական ենթակառուցվածքի բացակայությունը սահմանափակում են ոլորտի հետագա զարգացումը:

Տակավին վերջերս մասնավոր օպերատորին հանձնվեցին էներգետիկ ոլորտի ընկերությունները և դրա արդյունքում ոլորտը կայունացավ՝ հիմնականում ավելի լավ հավաքագրումների արդյունքում: Հավաքագրումների մակարդակը հասավ մոտ 100% 2003թ. և էլեկտրականության տեխնիկական և այլ կորուստները նկատելիորեն նվազել են: Շուկայի վրա հիմնված գործող էներգետիկ ոլորտը ապագայում ավելի կուժեղացվի անմիջական պայմանագրման և միակ գնողի մեխանիզմի արդյունավետ ապամոնտաժման միջոցով: Հայաստանի արտաքին պարտքի հաշվանցման արդյունքում էներգոարտադրության բնագավառում ռուսական օպերատորներին մեծ դեր է տրվել:

Գնային ազատականացման առումով Հայաստանը առաջանցիկ արդյունաբերական տնտեսությունների մակարդակին է հասել՝ ունենալով կառավարվող գների միայն փոքր ծավալ, հիմնականում բնական մենաշնորհներում: Կառավարվող գները կազմում են սպառողական գնային ինդեքսի մոտ 8%: Կոմունալ ծառայությունների կարգավորման հանձնաժողով է ստեղծվել էներգետիկայի, հեռահաղորդակցության և ջրային ոլորտների համար: Ավելի արդյունավետ գործելու համար հանձնաժողովը լրացուցիչ հզորացումից ավելի կօգտվի: Ջրի և ոռոգման սակագների աստիճանական ավելացումները ծախսածածկման համար ներկայումս ընթացքի մեջ են այս ոլորտներում, որոնք էական են գյուղատնտեսական արտադրության համար և երկար ժամանակ տուժել են ներդրումների բացակայությունից: 2003թ. ԱՀԿ-ին անդամակցելուց հետո Հայաստանը պարտավորություն ստանձնեց մինչև 2009թ. գյուղատնտեսական արտադրանքի վրա կիրառել ԱԱՀ:

3.2.2. Կարգավորիչ դաշտ և մասնավոր հատվածի զարգացում

Մասնավոր հատվածը բևեռացված է ինքնազբաղվածության և փոքր ձեռնարկությունների մեծածավալ ոչ ֆորմալ տնտեսության և մեծապես կենտրոնացված ֆորմալ տնտեսության միջև: Հայաստանը հաջողությամբ իրականացրել է առաջին փուլի կառուցվածքային բարեփոխումների մեծ խումբ, որն արտացոլված է Համաշխարհային Բանկի և Եվրոբանկի կողմից ներկայացված ցուցանիշներում: Օրինակ՝ համաձայն Համաշխարհային Բանկի 2004թ. ցուցանիշների Հայաստանը տարածաշրջանում և եկամտի իր մակարդակով երկրների շարքում համեմատաբար բավականին լավ է՝ գործ ձեռնարկություն սկսելու արդյունավետ կարգավորման, պայմանագրերի կիրառման և սեփականության գրանցման առումով: Հայաստանի զբաղվածության օրենսդրությունը միջազգային համեմատությամբ նույնպես համեմատաբար ճկուն է համարվել: Ցուցանիշները մատնանշում են, որ լրացուցիչ առաջընթաց պետք է գրանցվի կորպորատիվ հայտարարագրումն ուժեղացնելու համար: Գրավի և սնանկության դրույթները պետք է ավելի հստակեցվեն և կիրառվեն, որպեսզի դրանք հնարավորություն տան ֆինանսական միջնորդների միջոցով ընդլայնել ձեռնարկությունների և տնային տնտեսությունների վարկավորումը: Որոշ լուրջ թերություններ կան կորպորատիվ կառավարման և աուդիտի ստանդարտներում:

Սահմանադրությամբ ազատ տնտեսական **մրցակցությունը** երաշխավորված է և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը», որը հիմնված է միջազգային ուղեցույցների վրա, ուժի մեջ է մտել 2001թ.: Վերջինս արգելում է հակամրցակցային համաձայնություններ և գերիշխող դիրքի չարաշահում, սահմանում է կենտրոնացումները և որոշակի շեմքից բարձր տեղեկացման պարտավորություն է սահմանում: Օրենքը սահմանում է նաև իրականացնող մարմին, Տնտեսական

մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, որի յոթ անդամները նշանակվել են Նախագահի կողմից 2001թ.: Հանձնաժողովը իրավասություն ունի որոշում կայացնել, զուշացումներ տալ, պատժամիջոցներ և տուժեր կիրառել և դատարանում գործ հարցուել, սակայն այն իրավունք չունի տեղում ստուգումներ անց կացնելու համար: Ինստիտուցիոնալ առումով Հանձնաժողովը անկախ է որևէ պետական մարմնից, սակայն օրենսդրության արդյունավետ կիրառման համար դրան բացակայում է վարչական կարողություններ, միջոցներ և համապատասխան կիրառման դաշտ: Ներկայումս ԵՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը ներկայումս աջակցություն է տրամադրում հանձնաժողովին՝ իրականացման կանոնակարգերը մշակելու համար:

Ներկայումս գոյություն չունի **պետական աջակցության** վերահսկման կամ ստուգման ռեժիմ՝ ԵՄ-ի հետ համադրելի: Ապրանքների և ծառայությունների կառավարության գնումները ֆորմալ մրցութային գործընթացներով մեծացել են նոր «Գնումների մասին օրենքի» ընդունումից հետո, որն ուժի մեջ մտավ 2000թ.: 240 մրցույթներ են անց կացվել 2003թ., որին մասնակցել են մոտ 600 ձեռնարկություն՝ ընդհանուր 15 միլիարդ դրամ արժողությամբ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար: Սա նկատելի առաջընթաց է՝ համեմատած 2001թ. 5.5 միլիարդ դրամի գնումների հետ: Գրանցվել են օրենսդրության իրականացման թերություններ:

3.2.3. Ֆինանսական հատված

Հայաստանի Կենտրոնական Բանկը (ՀԿԲ) ստեղծվել է 1991թ. դեկտեմբերին: Հայաստանում այն **բանկային** գործունեության միակ կարգավորողն է: Դրան է պատկանում բանկային լիցենզիաների տրամադրման բացառիկ իրավասությունը և այն կարող է պատժամիջոցներ կիրառել օրենքի խախտումների համար՝ ներառյալ լիցենզիայի անվավեր ճանաչումը: 1996թ. «Բանկերի և բանկային գործունեության մասին օրենքը» հանդիսանում է Հայաստանի բանկային ոլորտի զարգացման օրենսդրական հիմքը: Կոնսոլիդացման ժամանակահատվածից հետո ներկայումս Հայաստանում գործում են 19 առևտրային բանկեր՝ բոլորը մասնավոր (30 բանկ 1997թ.): Կազմելով ՀՆԱ-ի 17%՝ բանկային ոլորտը դեռ թերզարգացած է ֆինանսական միջնորդները դեռ արդյունավետ չեն գործում, որն արտացոլված է բարձր ռիսկի ապահովագրերում: 2004թ. փոխառությունների միջին տոկոսը կազմել է 20% քիչ պակաս: Դոլարացումը դեռ բարձ է մնում՝ կազմելով բանկային ավանդների մոտ 70% և միջազգային փորձի վրա հիմնված կարելի է ասել, որ անհավանական է դրա արագ նվազումը: Հիպոտեկային վարկավորումը Հայաստանում ներդրվել է և այս բնագավառում առաջին զարգացումները քաջալերող են:

Բազելյան կոնվենցիայի կապիտալի համապատասխանության պահանջների ընդունումը խթանեց մնացյալ բանկերի աստիճանակալ վերակապիտալիզացմանը, մինչդեռ փոխառության ապահովման ծրագիրը օգնեց նվազեցնել անհույս վարկերը մինչև ընդհանուր վարկային փաթեթի 4.9%: 2005թ. հուլիսին նվազագույն կապիտալի պահանջը կբարձրացվի մինչև 5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեքը: Վերահսկման և կանոնակարգման նպատակներով ՀԿԲ-ն կիրառում է CAMEL դասակարգման մեթոդաբանությունը: ՀԿԲ-ն հիմնադրել է ավանդների ապահովագրման սխեմա, որն ամբողջովին կգործի 2005թ.: 2003թ. գործում է վարկերի գրանցման համակարգ: Կիրառվում են միջազգային հաշվապահական ստանդարտները:

Ոչ բանկային ֆինանսական հատվածը գտնվում է զարգացման ամենավաղ փուլերում: **Ապահովագրության** վերաբերյալ օրենսդրությունը ուժի մեջ է մտել 1996-97թթ.: 2003թ.

վերջի Հայաստանում գործում են 19 ապահովագրական ընկերություններ՝ կնքված ապահովագրական պայմանագրերի ընդհանուր 700 միլիարդ դրամ պարտավորություններով (ՀՆԱ-ի մոտ 40%): Վարկային կազմակերպությունների մասին նոր օրենսդրությամբ ստեղծվել են վեց կազմակերպություններ՝ ներառյալ երկու լիզինգային ընկերություններ: Ապահովագրության վերահսկման լիազորությունը տրված է Ֆիանսների և էկոնոմիկայի նախարարության ապահովագրական տեսչությանը: Չնայած, որ այն մի շարք կարևոր ձեռքբերումներ է գրանցել, սակայն ապահովագրական ոլորտի վերահսկման մարմնի վերահսկման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման տեղ դեռ կա: Ներկայիս օրենսդրությունը չի պահանջում, որ տեսչությունը, որպես լիցենզավորման պայման գնահատի սեփականատերերի, ապահովագրողների և աուդիտորների համապատասխանությունը: Ապահովագրության տեսչությունը ապահովագրական շուկայի զարգացման համար մշակել է ռազմավարական փաստաթուղթ:

2000թ. «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին օրենքին» համաձայն ստեղծվեց Արժեթղթերի Հանձնաժողով և Կենտրոնական Դեպոզիտարիա: Արժեթղթերի Հանձնաժողովը զբաղվում է արժեթղթերի թողարկմամբ, գրանցմամբ և հանրային վաճառքով: Օրենքով այն վերահսկում է արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնագետների, ինքնակարգավորվող կազմակերպությունների (ներառյալ Կենտրոնական Դեպոզիտարիան) և արժեթղթերի բորսաների գործունեությունները: Մոտ 190 ընկերություններ են ցուցակագրվել Հայաստանի արժեթղթերի բորսայում 2001թ. հուլիսից՝ 7.6 միլիարդ դրամ ընդհանուր շուկայական կապիտալացմամբ (2004թ. նոյեմբերի կեսի դրությամբ մոտ 1.1 միլիարդ եվրո): Գործարքների ընդհանուր ծավալները փոքր են՝ հիմնականում գանձապետական պարտատոմսեր:

3.2.4. Այլ դոնորների հետ հարաբերությունները

Հայաստանի անկախացումից հետո և ԱՄՆ-ն, և Համաշխարհային Բանկը երկրին տրամադրել են արտոնյալ պայմաններով միջոցներ և լայնածավալ տեխնիկական աջակցություն: Հայաստանի մակրոտնտեսական կայունությունը ուժեղացել է երեք տարվա միջոցառման ընթացքում (2001-2004թթ.), որը հանրապետությունը իրականացրեց ԱՄՆ-ի Աղքատության Հաղթահարման և Աճի Ծրագրով: 2004թ. հունիսին Համաշխարհային Բանկը հաստատեց նոր երկրի Օժանդակության Ռազմավարությունը, որը կենտրոնանում է մասնավոր հատվածով առաջնորդվող տնտեսական աճի, ավելի աղքատահեն աճի և ոչ եկամտային աղքատության նվազեցման վրա: ՎՋԵԲ-ն շարունակում է ուշադրությունը կենտրոնացնել տեղական բանկերի միջոցով ՓՄՁ և միկրոձեռնարկությունների ֆինանսավորման վրա և դիտարկում է նաև տեղական ֆինանսական հատվածում բաժնետոմսային ներդրումների հնարավորությունը: Հաշվի առնելով վարկ ստանալու սահմանափակ ինքնուրույն կարողությունը՝ ենթակառուցվածքների և կոմունալ ծառայությունների ֆինանսավորումը կարող է հասանելի դառնալ ՎՋԵԲ-ի ոչ անկախ հիման վրա, եթե այն ուղեկցվի համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներով (ՎՋԵԲ-ի երկրի ռազմավարությունն ընդունվել է 2003թ. նոյեմբերին):

Հայաստանը որակավորվել է ստանալու ԱՄՆ Հազարամյակի Մարտահրավերների Կորպորացիայի դրամաշնորհները, որի համար կառավարությունը առաջարկություն է ներկայացրել՝ ներառյալ գյուղական ենթակառուցվածքներում նոր ներդրումները և սոցիալական հատվածին բյուջետային աջակցությունը: Մի քանի այլ երկկողմանի դոնորներ ակտիվ գործունեություն են ծավալել Հայաստանում՝ ներառյալ էական

աջակցություն էՄ անդամ երկրներից: Հայաստանը դոնորների միջոցների բացակայություն չի ունեցել: Մյուս կողմից մասնավոր ներդրումների ներգրավման առումով միայն շատ համեստ արդյունքներ են գրանցվել (ՕՈՒՆ բավական կայուն է՝ վերջին տարիներին կազմելով ՀՆԱ-ի մոտ 5%): Դոնորների բավականին ծավալուն միջոցները պահանջում են սերտ համակարգում նրանց միջև և այս նպատակով երևանում գտնվող դոնորները ստեղծել են ընդգրկուն կառույցներ:

3.3. Առևտրի հետ կապված հարցեր, շուկայական և օրենսդրական բարեփոխումներ

1991թ. ի վեր Հայաստանն իրականացրել է շուկայական բարեփոխումներ՝ շեշտադրում անելով առևտրի ազատականացման, կայունացման և տնտեսական վերակառուցման վրա: 2003թ. Հայաստանն անդամակցեց ԱՀԿ-ին:

Լինելով ցամաքով շրջապատված երկիր, սահմանափակ բնական պաշարներով՝ Հայաստանը համաշխարհային առևտրում շատ փոքր մասնաբաժին ունի, որն արտացոլում է գլոբալ առևտրային ցանցերում ոչ բավարար ինտեգրացումը: Դրա առևտուրը շատ կենտրոնացված է՝ տարածաշրջանային և ոլորտային առումով: Մասնավորապես, հինգ առանցքային առևտրային գործընկերները կազմում են դրա ընդհանուր առևտրի 80%: ԵՄ-ն Հայաստանի առաջին ներմուծող և արտահանող գործընկերն է՝ կազմելով դրա ընդհանուր առևտրի 38%: Սակայն ԵՄ-ի երկկողմանի առևտուրը Հայաստանի հետ շատ ցածր է՝ 474 միլիոն եվրո 2003թ. (թվերը հաշվարկված են EU-25): Ռուսաստանն ու Իսրայելը Հայաստանի երկրորդ և երրորդ առևտրային գործընկերներն են՝ ներկայացնելով ընդհանուր առևտրի համապատասխանաբար 13% և 10%: Տարածաշրջանային առևտրային կապերը լրջորեն սահմանափակված են Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեյջանի հետ հակամարտության պատճառով: 2000թ. ի վեր Հայաստանի հետ ԵՄ առևտուրը որոշակի առումով փոփոխական միտում է ունեցել: ԵՄ ներմուծումը նվազեց 2001թ. (-38%), բայց հետո կրկնապատկվեց 2001-2002թթ.: 2003թ. ԵՄ ներմուծումները Հայաստանից նվազեցին մարժային արժեքով՝ 2.7%: Նմանապես ԵՄ արտահանումները Հայաստան շեշտակիորեն նվազեցին 2001թ. (-16.5%), բայց դրանից հետո կայուն ավելացել են՝ համապատասխանաբար 18% և 22% 2002թ. և 2003թ.: Հայաստանի առևտուրը ԵՄ-ի հետ շատ կենտրոնացված է, ուր գերիշխում են քանկարժեք քարերի ներմուծումը, մշակումը և դրանց հետագա արտահանումը ԵՄ: Սա կազմում է համապատասխանաբար Հայաստանից ԵՄ ներմուծումների 63% (99 միլիոն եվրո) ԵՄ-ից այս երկիր արտահանումների 34% (108 միլիոն եվրո): ԵՄ ներմուծում է նաև բազային մետաղներ (հիմնականում ալյումին)՝ մոտ 38 միլիոն եվրո: ԵՄ արտահանումները հիմնականում են սարքավորումներն են, հաստոցները և մեքենաները, որոնք կազմում են Հայաստան ԵՄ-ի ընդհանուր արտահանման 30%: Հայաստանն օգտվում է ԵՄ-ի Նախապատվությունների Ընդհանրացված Համակարգի (GSP) սխեմայից և դրա նախապատվային ներմուծումները հզոր կերպով մեծացել են 2001թ. ի վեր: Օգտագործման գլոբալ աստիճանը (ենթակա ներմուծումները համեմատած կատարվող GSP ներմուծումների հետ) 63% է, որը բոլոր շահառուների միջինից բարձր է: Մասնավորապես արդյունաբերական և գյուղատնտեսական ոլորտների GSP օգտագործման աստիճանը նկատելիորեն բարելավվել է:

Ընդհանուր առմամբ Հայաստանն ունի առևտրի մոտ 525 միլիոն եվրոի առևտրի բացասական հաշվեկշիռ, որը արտացոլվում է ՀՆԱ-ի մոտ 7.7% ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռում՝ նվազեցնելով միտումը նախորդ տարիների հետ համեմատած:

ԱՅԿ-ին Հայաստանի անդամակցությունից հետո տեքստիլ ոլորտում առևտրի երկկողմանի համաձայնությունը ուժը կորցրեց: Տեքստիլ ոլորտում առևտուրը հետագայում իրականացվում է առանց քանակական սահմանափակումների կամ ստուգումների՝ MFN հիման վրա: Հայաստանը հիմնական ԱՊՀ երկրների հետ կնքել է ազատ առևտրի համաձայնագրեր: Այն MFN առևտրի և համագործակցության համաձայնագրեր է կնքել մի շարք ոչ ԵՄ երկրների հետ:

Գյուղատնտեսական ոլորտը այսօր կազմում է ՀՆԱ-ի 20%: Արտադրությունը բնորոշվում է լեռնային գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսական հողը կազմում է 1.4 միլիոն հեկտար մշակահողեր, որոնցից միայն մոտ 400,000 վարելահողերը: Ոլորտում հիմնականում գերիշխում է սեփական կարիքների համար գուղատնտեսությունը: Սննդամշակման արդյունաբերությունը բավականին փոքր է և լուրջն ներդրումներ է պահանջում: Հայաստանը հայտնի է իր խաղողի և ծիրանի հոյակապ տեսականիով: Գյուղատնտեսական արտահանման հիմնական ապրանքներն են սպիրտային խմիչքները և տոմատի մածուկը:

Անասնաբուժական և ֆիտոսանիտարական խնդիրների կապակցությամբ Հայաստանը 1999-2000թթ. օրենսդրություն է ընդունել, որն իր մեջ ներառում է անասնաբուժական, պարենի ապահովության և բյուսերի պաշտպանության խնդիրներ: Չնայած, որ այս օրենսդրությունը պետական և տեղական, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների միջև մակարդակներով սահմանում է բարեփոխումներ, լիազորություններ և առաջնահերթություններ, սակայն դերակատարները դեռ չեն սահմանվել: Անասնաբուժական և ֆիտոսանիտարական համապատասխան հանրապետական ծառայությունների ապահովման համար ոլորտին չի հերիքում ֆինանսավորումը: Տարբեր նախարարություններ (գյուղատնտեսության, առողջապահության, արդյունաբերության) սննդի անվտանգության բնագավառում դերակատարում ունեն, որը հանգեցնում է համակարգման բարդությունների:

Կենդանիների ինքնության հաստատման համակարգի բացակայությունը, որը հնարավորություն է տալիս վերահսկել կենդանիների հիվանդությունները, սահմանափակ և վատ սարքավորված լաբորատորիաները, վատ վերապատրաստված աշխատակիցները և միջազգայնորեն չներդաշնակեցված սննդի ստանդարտները սահմանափակում են ոլորտի հետագա զարգացումները: Սպանդանոցների ոչ բավարար քանակը անտեսում է սննդի ապահովությունը մսի արտադրությունում: Հայաստանը ներկայումս արդիականացնում է իր սննդի անվտանգության միջոցառումները՝ կապված ԵՄ շուկա որոշ ձկնամթերքների արտահանման հետ:

Հայաստանը ԱՅԿ-ի, Սննդի և Գյուղատնտեսության Կազմակերպության (FAO), Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (WHO) և Էպիզոտների Միջազգային Գրասենյակի (OIE) անդամ է, բայց չի ստորագրել Բույսերի Պաշտպանության Միջազգային Կոնվենցիան (IPPC):

1992թ. ստեղծված **մաքսային** վարչությունը 2001թ. դարձավ անմիջապես կառավարության ենթակայության տակ գտնվող Պետական Մաքսային Կոմիտե (ՊՄԿ) և այն պատասխանատու է Հայաստանում մաքսային քաղաքականության կառավարման համար: Հանրապետությունում կա վեց տարածաշրջանային մաքսատուն և 11 մաքսակետ: Սահմանները Ադրբեջանի և Թուրքիայի հետ փակ են առևտրային երթևեկության համար, չնածած որ մաքսային անցակետեր կան: Հայաստանը կիրառել է Ապրանքների Դասակարգման Ներդաշնակեցված Համակարգ (HS) 1991թ. ի վեր: ԱՅԿ-

ին համապատասխան նոր Մաքսային Օրենսգիրքը ուժի մեջ մտավ 2001թ. հունվարի 1-ին: 2003թ. փոփոխություններով ստեղծվեց հետմաքսագերծման ստուգման հիմքը: Սակայն մաքսային օրենսդրության կիրառումը, ինչպես նաև մաքսային գնահատումը, լրացուցիչ բարելավումների կարիք ունի: Օրենսգրքի կիրառման համար գոյություն չունի եզակի օրենսդրություն, փոխարենը՝ բազմաթիվ օրենքներ և որոշումներ, որոնք ներառում են մաքսային բոլոր խնդիրները: «Մաքսային ծառայության մասին օրենքը» ուժի մեջ մտավ 2002թ., բայց ՄՊԾ համար չկա ոչ մի էթիկայի կոդեքս: Դրա ընդունումը կօգնի հետևել կոռուպցիային և նվազեցնել մաքսային վարչարարության հայեցողային մոտեցումները: Մաքսային ընթացակարգերի համար Հայաստանը կիրառում է եզակի Վարչական Փաստաթուղթը (SAD): Մաքսային հայտարարագրերի մշակման համակարգը (ASYCUDA) հիմնված է տեղում ընտրությունների վրա: Սակայն ռիսկի վերլուծության օգտագործումը պետք է լրացուցիչ մշակվի: Գոյություն ունի տեղեկատվության փոխանակման և առևտրականների և այլ շահագրգիռ անձանց հետ մաքսային հարցերի քննարկման հանձնաժողով և հանրության համար մատչելի բազմալեզու ինտերնետային էջ, որտեղ պարունակվում է մաքսային տեղեկատվություն և օրենսդրություն: Մի քանի մաքսային վճարներ են գանձվում մաքսային ձևակերպումների համար՝ ի լրումն մաքսային տուրքերի: Հայաստանը Վրաստանի հետ ստորագրել է տարանցիկ փոխադրումների երկկողմանի համաձայնագիր:

Ինչ վերաբերում է **հարկերին**, ապա գոյություն չունի միասնական հարկային օրենսգիրք, որը կներառի Հայաստանում կիրառվող բոլոր հարկերը: Մի քանի օրենքների գոյությունը, ինչպես նաև դրաց հաճախակի փոփոխությունները ազդեցություն են ունենում այս բնագավառում իրավական հստակության վրա: Շահութահարկի մասին օրենքը ուժի մեջ մտավ 1998թ. հունվարին: Քաղաքացիների վրա կիրառվում է եզակի 20% դրույքաչափը, մինչդեռ ոչ քաղաքացիների վրա կիրառվում է 5 կամ 10% դրույքաչափը՝ կախված եկամտի բնույթից: Հայաստանում չկա հարկ կապիտալից և կապիտալը ընկնում է շահութահարկի շրջանակներում:

Երկրի հարկային եկամտի հիմնական աղբյուրը ԱԱՀ-ն է: Այն ներդրվել է 1997թ.՝ 20% ստանդարտ դրույքաչափով, որը կիրառվում է տեղական և ներմուծվող ապրանքների վրա: Որոշ ապրանքատեսակների զրոականացվել են ԱԱՀ-ի նպատակների համար և որոշ ապրանքատեսակներ և ծառայություններ ազատված են ԱԱՀ-ից: Որոշ ներմուծվող ապրանքատեսակներ, որոնց համար ոչ մի մաքսային կամ ակցիզային տուրք չկա, ԱԱՀ-ով չեն հարկվում մաքսայինների կողմից ներմուծման պահին, այլ հարկային մարմինների կողմից վաճառքի կամ սպառման պահին: Գյուղացիական տնտեսությունների կողմից վաճառվող սեփական գյուղատնտեսական արտադրանքը, ինչպես նաև տեղական անասնաբուժական դեղերը ներկայումս ազատված են ԱԱՀ-ից: ԱՀ-ի պահանջներին բավարարելու համար Հայաստանը փոփոխություններ է կատարել ԱԱՀ-ի մասին օրենքում, որն այս խտրականությունը կվերացնի 2009թ. հունվարի 1-ից:

Համաձայն 2000թ. «Պարզեցված հարկի մասին օրենքի»՝ որոշ շենքից ցածր գործարքները ենթակա չեն շահութահարկի և ԱԱՀ-ի և բոլոր առևտրային գործունեությունները ենթակա են 8 կամ 13% դրույքաչափի, ըստ շրջանառության, մինչդեռ մանրածախ խանութների հանդեպ կիրառվում են 5 և 7% դրույքաչափերը: Որոշ ոլորտներ ազատված են (օրինակ՝ ակցիզային հարկի ենթակա ապրանքների արտադրողները), մինչդեռ այլ ոլորտներ ենթակա են հարկման, նույնիսկ եթե դրանք գերազենցում են այս շենքը (օրինակ՝ մանրածախ խանութներ, ռեստորաններ): Ակցիզային հարկերը կիրառվում են սպիրտային և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և նավթային ապրանքների հանդեպ:

2002թ. ստեղծված Պետական Հարկային Ծառայությունը հիմնված է նախկին Պետական Եկամուտների Նախարարության վրա: Ծառայությունը բաղկացած է չորս հիմնական վարչություններից՝ 26 տարածքային հարկային տեսչության վարչություններից և երեք հատուկ վարչություններից: Օրենսդրության և վարչական կարողությունների առումով դեռ ջանքեր են պահանջվում, մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարի, եկամուտների հավաքագրման ուժեղացման և հարկային գործընթացների պարզեցման, ներառյալ ԱԱՀ-ի վերադարձը, առումով:

Տեխնիկական կարգավորումների և արդյունաբերական արտադրանքների ստանդարտների առումով 1999թ. ընդունվեցին երկու նոր օրենք, որպեսզի ավելի ուժեղացնեն Հայաստանի օրենսդրության համադրելիությունը ԱՀԿ-ի Առևտրի Տեխնիկական Արգելքների Համաձայնագրի սկզբունքների հետ: Դրանք են «Ստանդարտացման մասին օրենքը» և «Ապրանքների և ծառայությունների համապատասխանության գնահատումը նորմատիվ պահանջներին» (այսուհետ օրենք համապատասխանության գնահատման մասին): 2000թ. կառավարությունը որոշում ընդունեց տեխնիկական կարգավորումների նախապատրաստման, ընդունման և կիրառման մասին:

«Ստանդարտացման և սերտիֆիկացման մասին օրենքը» իրավական հիմք է սահմանում ստանդարտացման, ինչպես նաև ապրանքների, ծառայությունների աշխատանքի (գործընթացներ) և որակի համակարգերի սերտիֆիկացման համար: Սա կիրառելի էր պետական կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հաստատությունների և մասնավոր ձեռնարկատերերի հանդեպ և սահմանում էր սպառողների և պետության շահերի պաշտպանության միջոցները՝ ստանդարտացման մասին նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման միջոցով:

Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման վարչությունը (SARM) հանդիսանում է ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման գործունեությունների համակարգողը: Ի շարք այլոց վերջինիս պատասխանատվությունները ներառում են ազգային ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի ստեղծումն ու ղեկավարումը, ազգային ստանդարտների և դասակարգիչների ընդունումը, միջազգային ստանդարտների կիրառումը, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրումը, սերտիֆիկացման հարցերով բողոքների և վեճերի կարգավորումը:

Ոչ խտրականացման սկզբունքը, երբ դա վերաբերում է ներքին և արտասահմանյան ապրանքներին և ծառայություններին, ինչպես նաև այլ պետությունների օրենսդրության համահավասարության սկզբունքը արտացոլված է 2000թ. որոշման մեջ: Համապատասխանության գնահատման մասին օրենքը կարգավորում է արտադրության, ապրանքների, աշխատանքի և ծառայությունների նորմատիվային պահանջների հետ կամավոր և պարտադիր համապատասխանության գնահատումը: Օրենքը սահմանում է նաև այդ ոլորտում պետական գործունեության իրավական հիմքը, ինչպես նաև որոշում է համապատասխանության գնահատման, ապրանքի շուկայավարման պայմանների և համապատասխանության գնահատման հետ կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Ստանդարտների Ազգային Ինստիտուտը (ՓԲԸ) հիմնադրվել է SARM շրջանակներում:

Սերտիֆիկացնող մարմինների և ստուգող լաբորատորիաների հավաստագրման գործընթացը հիմնադրվել է 2000թ. որոշմամբ: Տեղական և օտարերկրյա մարմինները և

լաբորատորիաները համաձայն համապատասխանության գնահատման Ազգային Համակարգում ունեն հավաստագրման հավասար իրավունքներ: Հայաստանը հանդիսանում է Ստանդարտացման Միջազգային Կազմակերպության (ISO) և Ստանդարտացման, Չափագրության և Սերտիֆիկացման Եվրո-ասիական Խորհրդի (EASC) անդամ: Ձանքեր են գործադրվում ԵՄ համապատասխան ստանդարտների Հայաստանում փոխանցման գործընթացն ավարտելու և անկախ լաբորատորիաների ստեղծման և լիցենզավորման համար, որտեղ հնարավոր է ստուգել տեխնիկական օրենսդրության մեջ սահմանված անվտանգության պահանջները:

Օրենսդրությունը ապահովում է գրական, գիտական և արվեստի գործերի, ներառյալ համակարգչային ծրագրերն ու տվյալների բազաները, պատենտները, մոդելները, արդյունաբերական նախագծերը, առևտրային ապրանքանիշների և ծառայությունների նշանների, առևտրային անունների, ինտեգրացված պատկերների, հեղինակային իրավունքի և համապատասխան իրավունքների և ծագման անվանման մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքի պաշտպանությունը: 1993թ. Հայաստանը դարձավ Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպության (WIPO): 2003թ. ԱՀԿ-ին անդամակցելուց հետո Հայաստանը պետք է ապահովի TRIPS-ի հետ իր օրենսդրության համապատասխանությունը: PCA Հայաստանից պահանջում է IPR պաշտպանության համար ապահովել նույն մակարդակը, ինչ որ գոյություն ունի EC-ում՝ ներառյալ կիրառման արդյունավետ մեխանիզմներ: Հիմա Հայաստանն անդամակցել է հիմնական IPR համաձայնագրերին և կոնվենցիաներին, բայց լրացուցիչ քայլեր են պահանջվում համապատասխան PCA պարտավորությունները ամբողջովին կատարելու համար: Այս ոլորտում քաղաքականության ձևավորումն ու իրականացումը հանդիսանում է Առևտրի և Տնտեսական Չարգացման Նախարարության կազմում գտվող Հայաստանի մտավոր սեփականության գործակալության պատասխանատվությունը: Այն պատասխանատու է արդյունաբերական սեփականության իրավունքների դիմումների հաստատման, արդյունաբերական սեփականության իրավունքի պետքեզիստի պահպանման, պաշտոնական հրապարակումների թողարկման և արտասահմանյան հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համար: Չնայած ընդունված օրենսդրության և կազմակերպչական կառույցների՝ IPR բնագավառում իրականացումն ու կիրառումը թույլ է: Առևտր-վիդեո ոլորտում կեղծիքներն ու իրավունքի խախտումները առանձնահատուկ մտահոգության առարկա են:

Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունը (ԱՎԾ) գործում է 2000թ. ընդունված վիճակագրական օրենսդրության հիման վրա՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի վիճակագրական սկզբունքներն ու ԵՄ թարմացված տեխնիկական աջակցությունը: ԱՎԾ-ն գերատեսչությունների մոտ բարձր հեղինակություն ունի: Քանի որ պետքույն բավարար չէ վիճակագրական համակարգի հետագա զարգացման համար, արտաքին ֆինանսավորումը էական է: Վիճակագրական համակարգում (ներառյալ տեղեկատվության հավաքման ծրագիրը) աշխատում է 814 մարդ, որից 217 կենտրոնական գրասենյակում: ԱՎԾ-ի գործում է, որպես երկրի վիճակագրական համակարգի համակարգող: Վիճակագրական գործունեությունների ծրագրավորումն և նորմատիվային փաստաթղթերի մշակումը իր ուժեղ կողմերից են: Այն որոշ տվյալներ է ստանում այլ նախարարություններից և գերատեսչություններից: ԱՎԾ-ն կարող է օգտվել որոշ ռեզիստորներից և այլ վարչական աղբյուրներից: Գերատեսչությունները մնում են ամենակարևոր օգտագործողները, բայց այլ օգտագործողների կարիքները նույնպես հաշվի են առնվում: Եվրոստատի հետ մշտապես փոխանակվում են արտաքին առևտրի տվյալները: Ներկայիս վիճակագրական համակարգը աջակցության կարիք ունի,

որպեսզի հետագա բարելավումներ կատարվեն միջազգային ստանդարտների հետ համապատասխանելու համար՝ շեշտադրում կատարելով ԵՄ-ում օգտագործվող ստանդարտների վրա:

Ֆինանսական վերահսկման հետ կապված՝ Ազգային ժողովի Վերահսկիչ Պալատը (ՎՊ) Հայաստանի գերագույն ստուգիչ հաստատությունն է: ՎՊ-ն ստուգում է ազգային բյուջեի կատարումը և օտարերկրյա փոխառությունների և դրամաշնորհների օգտագործումը: ՎՊ-ի նախագահն ու անդամները նշանակվում են և կարող են հեռացվել Ազգային ժողովի կողմից, որը սահմանում է նաև աուդիտի ծրագիրը և պալատի հաշվետվությունների բովանդակությունն ու բնույթը: Սա անմիջական ազդեցություն ունի դրա անկախության վրա: Կան Նախագահի վերահսկիչ ծառայությունը, վարչապետի վերահսկիչ ծառայությունը և Ֆինանսների և Էկոնոմիկայի վերահսկիչ ծառայությունը և այլ վերահսկիչ գործակալություններ: Ներկայումս գործող բոլոր մարմինների աշխատանքներում կրկնություն կա, ինչպես նաև տեղեկատվության լրացուցիչ փոխանակման անհրաժեշտություն: ՎՊ-ն, որը հանդիսանում է Գերագույն Աուդիտորական Հաստատությունների Միջազգային Կազմակերպության (INTOSAI) անդամ, կազմակերպչական կարողության, աուդիտի մեթոդականությունների և ֆինանսական ու մարդկային ռեսուրսների հզորացման լրացուցիչ ուժեղացման կաիրք ունի:

2000թ. ընդունված նոր օրենքը սահմանում է **պետական գնումների** ռեժիմի արդիականացման սկզբունքներն ու գործընթացները: Օրենքը նախագծելիս՝ իշխանություններն առաջնորդվել են ԵՄ-ի ուղեցույցների և ԱՀԿ-ի կառավարության գնումների համաձայնության հետ ընդհանուր համադրելիություններից: Օրենքի դրույթները համադրելի են UNCITRAL-ի հետ: Սողելային օրենքը և լրացուցիչ փոփոխությունները կարևոր են լավ գործող գնումների համակարգն ապահովելու համար: Պաշտպանության և ազգային անվտանգության, ինչպես նաև կառավարության այլ կարիքների համար գնումները կատարվում են համաձայն «Գնումների մասին օրենքի» և փակ են միայն այն ժամանակ, երբ պետական գաղտնիք գոյություն ունի: Հայաստանը նշել է ԱՀԿ-ի պետական գնումների համաձայնագրին միանալու իր ցանկության մասին: Իրականացնող և վերահսկող մարմինը Պետական Գնումների Գործակալությունն է (ՊԳԳ), որը 2002թ. դարձավ պետական ոչ-առևտրային կազմակերպություն՝ հաշվետու Ֆինանսների և Էկոնոմիկայի Նախարարությանը: Այն իրավական կարծիք է տրամադրում մրցութային հանձնառուողի անդամների գործողությունների վերաբերյալ մրցութային գործընթացի ընթացքում:

Ինչ վերաբերում է **ծառայությունների մատուցման և ստեղծման իրավունքին**, ապա Հայաստանի ներդրումային քաղաքականությունը ԱՊՀ երկրներում ամենաբացն է: Հիմնականում արտաքին առևտրի և ներդրումների վրա հիմնված իր տնտեսությամբ՝ կառավարությունը նկատելի ձանքեր է գործադրել ներդրումներ գրավելու ուղղությամբ: Ներդրումների միջավայրը կարգավորող հիմնական դրույթները սահմանված են 1994 թ. «Օտարերկրյա ներդրումների մասին օրենքում» (ՕՆՄՕ). ՕՆՄՕ-ի հիմնական նպատակն է խթանել օտարերկրյա ներդրումներին: Սակայն առավելություններ են սահմանվել միայն այն մարմիններին, որտեղ օտարերկրյա ներդրումները կազմում են կապիտալի առնվազն 30%: Տնտեսության բոլոր ոլորտները բաց են օտարերկրյա ներդրումների համար, սակայն կոնկրետ ոլորտներում գործունեություն ծավալելու համար (ինչպիսիք են բանկային գործունեությունը, արժեթղթերի շուկան, ապահովագրությունը և այլն) օտարերկրյա ներդրողները պետք է լիցենզիա ձեռք բերեն: ՕՆՄՕ-ով սահմանված օգուտները, ի շարք այլոց, ներառում են օտարերկրյա

ներդրողների հանդեպ նույն վերաբերմունքը, ինչ որ տեղականների հանդեպ, պաշտպանություն ընդեմ առգրավման և բռնագրավման, փոխհատուցում կառավարության անօրինական գործողությունների դեմ և ազգային օրենսդրության հակադարձ փոփոխություններից 5 տարվա ազատում: Ներդրումների հիմնական գործակալություններն են Առևտրի և Տնտեսական Ջարգացման Նախարարությունը, որը պատասխանատու է օտարերկրյա ներդրումային քաղաքականության և դրա կատարման համար և ներդրումների խթանման համար պատասխանատու է 1998թ. հիմնադրված Հայկական Ջարգացման Գործակալությունը, որը մեկ կանգառի ծառայություններ է մատուցում ներդրողներին և արտահանողներին: ՀԶԳ-ի կազմակերպչական ներկայիս թուլությունների լույսի ներքո՝ գործակալության ներդրումների խթանումից և աջակցումից բաղկացած իր հիմնական գործառույթների իրականացումը պատշաճ չէ և կարիք ունի վերանայման:

1997թ. Հայաստանի Հանրապետության «Սեփականաշրոհման մասին օրենքում» (փոփոխված 1999թ.) ասվում է, որ օտարերկրյա ընկերություններն ունեն սեփականաշնորհմանը մասնակցելու նույն իրավունքները, ինչ որ հայկական ընկերությունները:

3.4. Տրանսպորտ, էներգետիկա, տեղեկատվական հասարակություն, շրջակա միջավայր, հետազոտություն և նորանվճարություն, մարդիկ-մարդկանց հարցեր

Տրանսպորտի և Կապի Նախարարությունը պատասխանատու է տրանսպորտային քաղաքականության սահմանման համար: Ներկայումս ազգային տրանսպորտային քաղաքականությունը գտնվում է ուսումնասիրության փուլում՝ նախկին պետական տրանսպորտային ձեռնարկություններից շատերի սեփականաշնորհումից հետո հստակեցնելու քաղաքականության ձևավորումները և նախարարության կարգավորիչ գործառույթները: Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմաններով և ցամաքով շրջապատված Հայաստանի համար ոչ բավարար տրանսպորտային կապերը լուրջ մտահոգություն են: Ներքին տրանսպորտային ճանապարհները Հայաստանին կապում են Վրաստանի և Իրանի հետ: Վրաստանի հետ կա նաև երկաթուղային կապ: Հայաստանի հյուսիսում գտնվող Գյումրու միջոցով Վրաստանին ու Թուրքիային կապող երկաթուղին ներկայումս չի գործում՝ Թուրքիայի հետ փակ սահմանների պատճառով: Հետևաբար Հայաստանը մեծապես կախված է քաղաքացիական ավիացիայից: Ֆիզիկական ենթակառուցվածքների շատ խղճուկ վիճակը և ոչ սովորական շատ բարձր տրանսպորտային սակագները (նորից հայ-թուրքական փակ սահմանի պատճառով) բարդացնում են իրավիճակը: Ներկայումս իրականացվում է ենթակառուցվածքների վերականգնում և ամենակարգից Հայաստանի մասնակցությունը TRACECA նախաձեռնությանը (TRANsport Corridor Europe-Caucasus-Asia) կարևոր դեր է ունեցել տրանսպորտային կապերի զարգացման ջանքերում: Սակայն էական ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ զարգացումներ են պահանջվում ամբողջ միջանցքով համագործակցությանը խթանելու համար:

Ճանապարհների ոլորտում ենթակառուցվածքների զարգացումն ու շահագործումը դրված է «Հայկական ճանապարհներ» ՊՓԲԸ-ի վրա, որը ներկայումս հզորացվում է: Միջքաղաքային բեռնա-ուղևորային փոխադրումները սեփականաշնորհվել են: Նախարարությունը պատասխանատու է ոլորտի կարգավորման և վերահսկման համար, որը վերջերս ուժեղացվել է տեսչական վարչության ստեղծմամբ: Ճանապարհային անվտանգությունը մտահոգության առարկա է, որին նույնպես անդրադառնում է

ճանապարհների Անվտանգության Ազգային Խորհուրդը: Մեքենաների ճանապարհային պիտանելիությունը չի ստուգվում:

Երկաթուղային ոլորտում 1998թ. Հայկական երկաթուղիներ (ՀԵ) պետական ձեռնարկությունը վերակառուցվեց երեք առաձին ընկերությունների (երկաթուղային բեռնափոխադրումներ, շարժակազմ և երկաթուղային ենթակառուցվածք)՝ առանձնացնելով ենթակառուցվածքի կառավարումը ծառայությունների մատուցումից: 2001-2002թթ. սրա արդյունքում բեռնափոխադրումները առաջին անգամ աշխատեցին օգուտով: Սակայն 2002թ. վերջում երեք մարմինները վերամիավորվեցին մեկ պետական ձեռնարկությունում: Եվ ընդհանուր երկաթուղային ցանցը, և շարժակազմը էական թարմացումների կարիք ունեն:

Ավիացիոն ոլորտում Քաղաքացիան Ավիացիայի Գլխավոր Վարչությունն (ՔԱԳՎ) ամբողջովին առանձնացած է նախարարությունից և գործում է, որպես պետական ավիացիոն կարգավորիչ մարմին: Այն ստեղծել է նաև մի քանի տնտեսվարող սուբյեկտ պետական ձեռնարկությունների տեսքով՝ ներառյալ վերջերս լուծարված ազգային օդափոխադրող Հայկական Ավիաուղիները. հինգ ձեռնարկություններ, որոնք մատակարարում են վառելիք, վերապատրաստում, բժշկական, շինարարական և հանգստի ծառայություններ, ինրպես նաև երեք օդանավակայաններ՝ Ջվարթնոց և Էրեբունի Երևանում ու Շիրակը Գյումրիում, որը Հայաստանի երկրորդ ամենամեծ քաղաքն է: 2002թ. կոնսեսիոն կառավարման հանձնվեցին Ջվարթնոց օդանավակայանները հիմնարար վերակառուցման և զարգացման համար: ՔԱԳՎ նշանակված է Հայաստանի կառավարության կողմից, որպեսզի կառավարի Հայկական Ավիաուղիների պետական բաժնետոմսերը, որը ամբողջովին պետական ձեռնարկություն էր: Մասնավոր Արմավիա ընկերությունը իր գործունեությունները սկսեց 2001թ.: Մեկ այլ մասնավոր փոխադրող, Հայկական Միջազգային Ավիաուղիները (AIA) ստեղծվեցին 2002թ. հունիսին: Եվ Արմավիան և AIA ներկայումս բանակցություններ են վարում Հայաստանի կառավարության հետ Հայկական Ավիաուղիների չվերթների ձեռք բերման և դրա դե ֆակտո ժառանգորդը դառնալու համար: Հանձնաժողովի և Հայաստանի իշխանությունների միջև նախնական հանդիպումներ են տեղի ունեցել՝ հորիզոնական օդային տրանսպորտի համաձայնագրի բանակցման հեռանկարով:

Արբանյակային նավիգացիայում տեղեկությունների նախնական փոխանակում է տեղի ունեցել 2004թ. TRACECA շրջանակներում, որպեսզի GALILEO նավիգացիոն, հետևման և դիրքավորման ծառայությունները ազգային և տարածաշրջանային մակարդակներով ապահովեն ցամաքային, ծովային և օդային երթևեկության անվտանգությունն ու արդյունավետությունը:

Հայաստանի **էներգետիկ** ոլորտը լուրջ մարտահրավերների առջև է կանգնած՝ ներառյալ ենթակառուցվածքի և ցանցերի վատ վիճակը, որը վնասվում է կորուստներից առ գոյությունները, անարդյունավետությունները, մեկ աղբյուրից մեծ կախվածությունը (Ռուսաստան), թերներդրումները, պարտքերի չվճարումները և կախվածությունը փակվող միջուկային ատոմակայանից: Այս խնդիրների լուծումը կարևորագույն նշանակություն ունի տնտեսական աճի և աղքատության կրճատման համար: Հայաստանը գրեթե բացառապես կախված է ռուսական էներգետիկ ներմուծումներից (ամբողջ գազի և միջուկային վառելիքը, նավթամթերքների մեծ մասը): Այն ունի էական հիդրոէներգետիկ կարողություն (էներգետիկ արտադրության մոտ 30%) և չչահագործված ածխի և բիտումային պահուստներ: Հիդրոկարբոնի հետազոտությունները շարունակվում են: Չկան ոչ նավթամշակման գործարաններ, ոչ էլ

Նավթամուղեր: Հայաստանի մատակարարման անվտանգությունը ավելի է լարվում Թուրքիայի և Ադրբեջանի հետ փոխադարձ կապերի փակման պատճառով: Գազը ներմուծվում է Վրաստանից մեկ խողովակաշարով, մինչդեռ նավթամթերքները ներմուծվում են երկաթուղով և ճանապարհով: Հայաստանը ցանկանում է Իրանի հետ զարգացնել գազի և էներգետիկայի կապերը, ներառյալ թուրքմենական գազի ներմուծումները: 2004թ. մայիսին Հայաստանը և Իրանը ստորագրեցին մինչև 2007թ. գազատար խողովակաշարի կառուցման համաձայնագիրը: Երկիրը նախատեսում է նաև մեծացնել հիդրոէներգիայի արտադրությունն ու արտահանումը, հիմնականում Վրաստան:

Ներկայումս Հայաստանը Մեծամորի միջուկային էլեկտրակայանում (ՄՄԷԿ) շահագործում է խորհրդային VVER 440 տեսակի ճնշված թեթև ջրային ռեակտորներից (յուրաքանչյուրը 440 MW) մեկը: ՄՄԷԿ-ը փակվել էր 1989թ.՝ երկրաշարժից հետո, բայց բլոկ-2 վերսկսեց իր աշխատանքները 1995թ., որպեսզի փոխլրացնի էներգետիկ պակասորդը: Բլոկ-2 ապահովում է երկրի էներգոարտադրության 35-40%: Կայանը պատկանում է էներգետիկայի Նախարարությանը, որը 2003թ. սկսած, հիմնականում միջուկային վառելիքի չվճարումների պատճառով որպես պարտքի փոխհատուցում հանձնվեց ռուսական ՄԷՀ (Միասնական էներգոհամակարգեր) ընկերության ֆինանսական կառավարմանը: ԵՄ գտնում է, որ ՄՄԷԿ հնարվոր չէ ողջամիտ զներով նորացնել միջուկային անվտանգության միջազգային ստանդարտների մակարդակի հասցնելու համար: 1996թ. Նախագահ Տեր-Պետրոսյանը հանձնաժողովին տեղեկացրեց, որ կառավարությունը մտադիր է Մեծամորը շահագործել այնքան ժամանակ, որքան ժամանակ կպահանջվի էներգետիկայի այլընտրանքային աղբյուրի ստեղծման համար: Հանձնաժողովը աջակցություն տրամադրեց (21 միլիոն մինչև 2003թ.) ՄՄԷԿ-ում միջուկային անվտանգության և շահագործումից դուրս հանելու միջոցառումների համար և ֆինանսավորեց Հայաստանի երկարաժամկետ ռազմավարության մշակման ուսումնասիրությունները: «Խախաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման մասին օրենքը» ուժի մեջ է մտել և վերջերս ենթարկվեց փոփոխությունների՝ շահագործումից դուրս բերելու հիմնադրամի ստեղծման նպատակներով: Միջուկային կարգավորչի գործառույթներն իրականացնում է Բնապահպանության Նախարարությունը: Հայաստանը գործարկում է նաև միջուկային հետազոտությունների երկու ինստիտուտ, մեկը՝ Երևանում և մյուսը Անալիծարքում: Ռադիոակտիվ աղբյուրների վերահսկումը, ներառյալ փափոնների կառավարումն ու ապօրինի թրաֆիկինգի խուսափումը արժանի է ուշադրության: «Էներգետիկայի մասին օրենքը», «Հանրային ծառայությունների կարգավորիչ հանձնաժողովի մասին օրենքը» ապահովում են էներգետիկայի, գազի և ջերմային ոլորտների կարգավորման հիմնական դաշտը: Անկախ Հանրային Ծառայությունների Կարգավորման Հանձնաժողովը (ՀԾԿՀ) վերահսկում է այս բնագավառները:

Հայաստանի էներգետիկ ռազմավարության սկզբունքները, հիմնված «էներգետիկայի մասին օրենքի» վրա, ներառում են մատակարարման ապահովության բարելավումը, մրցակցության ուժեղացումը, շրջական միջավայրի պաշտպանությունը և էներգետիկ արդյունավետության մեծացումը ու շրջանառու էներգետիկ աղբյուրները: Ներկայումս նախապատրաստվում է ազգային էներգետիկ ռազմավարությունը: Էներգետիկայի ինստիտուտը և էներգետիկայի ռազմավարական կենտրոնը, որոնք գտնվում են էներգետիկայի Նախարարության հովանու ներքո, աջակցում են էներգետիկ քաղաքականության աշխատանքներին՝ ներառյալ էներգետիկ բավարարվածությունն ու շրջանառու էներգետիկայի ծրագրերը: Էներգետիկայի ոլորտի վերակառուցումները,

ներառյալ սեփականաշնորհունը նկատելի առաջընթաց են գրանցել: Սակայն ավելի շատ պետք է արվի՝ ներառյալ գնային խախտումների աստիճանական վերացումը:

Նախկին ուղղահայաց ինտեգրացված էներգետիկ ընկերություն Հայէներգոն բաժանվել է արտադրության, փոխանցման և բախշման: 2004թ. հոկտեմբերից այն դադարեցրեց իր գործունեությունները (օրինակ՝ էներգիայի մեծածախ վաճառք և փոխանցում) և պետք է լուծարվի: ՄԷՀ-ին, որպես գույք պարտքի դիմաց գործարքի մի մաս, պատկանում է արտադրական մեծ կարողություններ (Հրազդանի ջերմոկայանը և էլեկտրոկայանը և Սևան-Հրազդան կասկադը) և ՄԹ-ում գրանցված ընկերությանն է (Midland Resources Ltd) պատկանում բախշման ոլորտը: Հիդրոէլեկտրոկայանները հիմնականում սեփականաշնորհված են: Փոխանցման ցանցը շահագործվում է Բարձրավոլտ էլեկտրոկայան պետական ձեռնարկության կողմից: Հայռուսգազարդը (45% պետական, 45% ռուսական Գազպրոմ և 10% Իտերա ինթերնեյշնլ) գերիշխում է գազի ոլորտում, որպես գազի միակ ներմուծող և փոխանցման, բախշման և ստորերկրյա գազի պահուստի սեփականատեր ու շահագործող: Նավթամթերքների ոլորտը ընդհանուր առմամբ ազատականացվել է: Հայաստանը նվիրված է ավելի շատ շրջանառու էներգետիկ աղբյուրներ օգտագործելուն (հիմնականում փոքր հիդրոկայաններ, բայց հողմային, բիոմասայի և գեոթերմալ էներգիայի մեծ ներուժ կա), որը կբարելավի շրջակա միջավայրը, կնվազեցնի ներմուծման ծախսերը և կհզորացնի մատակարարման անվտանգությունը: PSRC նպատակաուղղված է սակագների սահմանման միջոցով խթանել շրջանառու էներգետիկայի օգտագործմանը: էներգետիկ արդյունավետությունը պետք է բարելավվի: «Շրջանառու էներգիայի մասին օրենքը» և «էներգետիկ արդյունավետության մասին օրենքը» ընդունվել են 2004թ.:

Տեղեկատվական հասարակության ոլորտում Տրանսպորտի և Հեռահաղորդակցության Նախարարությունը (ՏՀՆ) պատասխանատու է ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար: Նախարարությունն ունի նաև կարգավորիչ պատասխանատվություն և լիցենզավորում է հեռահաղորդակցության ծառայությունները: 2003թ. ընդունված «Հանրային ծառայությունների մասին օրենքը» սահմանում է, որ հեռահաղորդակցության կարգավորումը փոխանցվի անկախ և բազմոլորտային մարմնին: Կարգավորիչ մարմինը կստեղծվի, միայն երբ ընդունվի «էլեկտրոնային հաղորդակցումների մասին օրենքը»: Խորհրդատվական կարգավիճակով ՏՏ Ջարգացման Աջակցման Խորհուրդը (ՏՏՁԱԽ) հիմնադրվել է 2001թ. նախագահական հրամանով, որպեսզի ֆորմալ երկխոսություն ծավալվի կառավարության, ՏՏ արդյունաբերության և քաղաքացիական հասարակության խմբերի միջև:

1997թ. սեփականաշնորհվեց Հայաստանի հեռահաղորդակցության ընկերությունը (Արմենտել) և վերջինիս տրվեց ֆիքսված ենթակառուցվածքի, ֆիքսված ձայնային հեռախոսի, շարժական հեռահաղորդակցության և կաբելային հեռուստատեսության 15 տարվա բացառիկ լիցենզիա: ՏՀՆ-ն կողմից լիցենզավորվող տվյալների փոխանցումը ազատականացվել է, բայց այն Արմենտելից գծերի վարձակալություն է պահանջում: 2002թ. բավարար ենթակառուցվածքի բացակայության պատճառով Արմենթելը փակեց շարժական կապի բաջանորդագրությունը նոր օգտագործողների համար: Շարժական հեռախոսակապի առկայությունը ամենացածրն է տարածաշրջանում՝ 1.7 100 բնակչի հաշվով: Լրարային հեռախոսագծերի ծառայությունները ավելի լավ են՝ 14 100 բնակչի հաշվով, բայց ծառայությունները մատչելի չեն որոշ գյուղական վայրերում: Ինտերնետի չափազանց բարձր գնի պատճառով ինտերնետի ծառայությունների տարածվածությունը շատ ցածր է՝ բնակչության մոտ 3% պակաս: Հայաստանի իշխանությունների և ՕԹԵ

ընկերության, որին պատկանում է Արմենտելի բաժնետոմսերի 90%, ավարտվեց 2004թ. վերջին դատարանից դուրս համաձայնության կնքմամբ, որով Արմենտելը կորցրեց շարժական հեռախոսային ծառայությունների մենաշնորհը: Շարժական հեռախոսային ծառայության երկրորդ լիցենզիան հապճեպ շնորհվեց K Telekom ընկերությանը:

Աուդիո-վիզուալ ոլորտում Հայաստանում գործում են պետական և մասնավոր հեռուստատեսային և ռադիո ընկերություններ: 2002թ. «Հեռուստա-ռադիո հեռարձակման մասին» օրենքը ոլորտը կարգավորող հիմնական փաստաթուղթն է: Անկախ Հեռուստատեսության և Ռադիոյի Ազգային Հանձնաժողովը, հիմք ընդունելով այս օրենքը, պատասխանատու է մասնավոր հեռուստատեսային և ռադիոընկերություններից լիցենզիա տրամադրելու և մոնիտորինգի ենթարկելու համար: Հայաստանի հնագույն և հարուստ մշակութային ժառանգությունը փոխանակումների հզորացման լավ հիմք է և քաղաքացիության կառուցման առանցքային հենք: Հայաստանը մշակութային մասնակցությունը համարում է, որպես աղքատության հաղթահարման գործիք:

Շրջակա միջավայրի առումով Հայաստանը 1998թ. մշակել է Ազգային Բնապահպանական Գործողությունների ծրագիրը (վերանայվել է 2004թ.), որով սահմանվում են առաջնահերթությունները՝ օդի, հողի և ջրի աղտոտվածություն, բնական ռեսուրսների և վտանգված էկոհամակարգերի գերշահագործում և շրջակա միջավայրի առողջապահական խնդիրներ և վտանգներ: 2002թ. հաստատվեց Ազգային Շրջակա Միջավայրի Առողջապահական Գործողությունների Ծրագիրը: 2003թ. Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագիրը շրջակա միջավայրը նույնպես սահմանում է, որպես առաջնահերթության գոտի: Սահմանադրությամբ պահանջվում է, որ պետությունը պաշտպանի շրջակա միջավայրը, ինչպես նաև ապահովի բնական պաշարների ռացիոնալ օգտագործումն ու վերարտադրողականությունը: Շրջակա միջավայրի մասին ընդունված ոչ մի օրենսդրություն չկա և հետևաբար ոլորտը կարգավորվում է Քաղաքացիական, Վարչական և Քրեական Օրենսգրքերով, «Տեսչությունների մասին օրենքով» և «Լիցենզավորման մասին օրենքով»: 1995թ. ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին օրենքը», որը 1991թ. Բնության Պաշտպանության Օրենսդրության Սկզբունքների հետ միասին քաղաքացիներին իրավունք է տալիս տեղեկատվություն պահանջել և ներգրավված լինել որոշումների կայացման գործընթացում: 2002թ. հիմնադրվեց շրջակա միջավայրի տեղեկատվական կենտրոնը:

Բնապահպանության Նախարարությունը ստեղծվել է 1991թ.: Մի շարք այլ նախարարություններ, ինչպիսիք են Ֆինանսների և Էկոնոմիկայի, Առողջապահության, Գյուղատնտեսության, Ներքին Գործերի, Արդարադատության և Պետական Եկամուտների Նախարարությունները, ներգրավված են բնապահպանական խնդիրներում: Պետական բնապահպանական տեսչությունը պատասխանատու է արտանետումների վերահսկման համար, որը նույնպես իրականացվում է տարածաշրջանային տեսչությունների կողմից: Ջրամատակարարման հարցերով զբաղվում է Ջրային Ռեսուրսների Կառավարման Պետական Կոմիտեն:

Բնապահպանության Նախարարությունը օրինագծեր է նախապատրաստել շրջակա միջավայրի որակի նոր ստանդարտների ներդրման համար, որը պետք է արտացոլի միջազգային փորձն ու ԵՄ օրենսդրությունը: Նոր Հողային Օրենսգիրքը ընդունվել է 2001թ. և Ջրային Օրենսգիրքը, ինչպես նաև Հանքային Պաշարների Օրենսգիրքը՝ 2002թ.: Ներկայումս նախապատրաստվում են օրենքներ թույլատվությունների,

հանրային մասնակցության, սեյսմիկ անվտանգության, հանքային ուսումնասիրությունների, բնապահպանական վճարների, ինչպես նաև բնապահպանական կրթության մասին:

Ոլորտին յուրահատուկ գործողությունների ծրագրեր և ռազմավարություններ են մշակվել անապատացման, կենսաբազմազանության և հատուկ պահպանվող գոտիների, օզոնային շերտը քայքայող նյութերի, ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման և կայուն օրգանական աղտոտիչների վերաբերյալ: 1998թ. ընդունվել է Սևանա լճի գործողությունների ծրագիրը և խորհրդարանին է ներկայացվել «Ջրային քաղաքականության մասին օրենքի» նախագիծը:

Շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնը, հիդրոօդերևութաբանական վարչությունը և երկրաբանական վարչությունը իրականացնում են շրջակա միջավայրի մոնիտորինգի գործունեություններ: Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաներ, որոնց անդամակցում է և մասնավորապես անդամակցել է կլիմայի փոփոխության Կիոտոյի Արձանագրությանը:

Կառավարությունը հավանության է արժանացրել հինգ թեմաներ ներառող հետազոտության և նորանվճարման ռազմավարական ծրագիրը: Այս հինգը շատ լավ համապատասխանում են վեցերորդ ծրագրի թեմատիկ առաջնահերթություններին՝ տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ, գիտություններ կյանքի մասին, սննդի անվտանգություն և որակ, շրջակա միջավայր և էներգետիկա ու նանոտեխնոլոգիաներ: Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիան պատասխանատու է հետազոտական քաղաքականության իրականացման համար: Կրթության և Գիտության Նախարարը հանդիսանում է դրա նախագահության անդամ՝ երաշխավորելով կառավարության և համալսարանների հետ ընդհանուր համակարգումը: Ակադեմիային են պատկանում մոտ 4,000 հետազոտողներից բաղկացած մոտ 40 ինստիտուտներ: Շենքերի և ժամանակակից սարքավորումների ձեռք բերման համար միջոցների անբավարարությունն ու միջազգային չափանիշներով մրցակցային աշխատավարձերի բացակայությունը բարդեցնում են որակյալ աշխատակիցների պահումը:

Հայաստանը հինգերորդ ծրագրի շրջանակներում մասնակցել է 15 հետազոտական պայմանագրերի: Սրանք վերաբերում են թեմատիկ ցանցերի օգտագործմանը և 17 հայ մասնակիցների, որոնցից մեծ մասը Ակադեմիայից էին, ներգրավածությամբ միացյալ հետազոտական ծրագրերին: Նպատակները կենտրոնանում էին միջազգային համագործակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և էներգետիկայի հատուկ միջոցառումների վրա: Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիան ստեղծել է Ազգային Կապի Կետի կառուցվածք (մեկ ընդհանուր ոլորտը ներառում է ամբողջ վեցերորդ ծրագիրը և մեկ այլը նվիրված է Տեղեկատվական Հասարակության Տեխնոլոգիաներին):

2004թ. ապրիլի դրությամբ Հայաստանի 26 մարմին մասնակցեցին վեցերորդ հետազոտական ծրագրի առաջարկությունների ներկայացմանը, ներկայացնելով 23 առաջարկություն, որոնցից ոչ մեկը չընտրվեց: Առաջարկությունները սկզբունքորեն հասցեագրված էին միջազգային համագործակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և շրջակա միջավայրի հատուկ միջոցառումներին:

Կրթական համակարգում կան պետական և մասնավոր հաստատություններ՝ ներառյալ նախադպրոցական, տարրական (7-9 տարեկան), հիմնական (10-14 տարեկան), հանրակրթական, բարձրագույն և հետբուհական մակարդակներ: Տարրական և հիմնական մակարդակներում կրթությունը պարտադիր է: Հիմնական մակարդակում հաճախումը շատ բարձր է: Տեսականորեն պետական ոլորտում կրթությունը ձրի է, բայց լայնատարած ոչ ֆորմալ վճարումները (օրինակ՝ վճարներ, դպրոցական պարագաներ) հիմնականում հարված են հասցնում խոցելի խմբերի երեխաներին՝ ներառյալ գյուղական բնակչությունը, որի արդյունքում շատ են դպրոց չհաճախումները: Կրթությունն ու վերապատրաստումը բարեփոխումների կարիք ունեն, որը ավելի հրատապ դարձավ 1988 երկրաշարժից հետո: Մարտահրավերներից են որակի անկումը (օրինակ՝ ոչ հստակ ստանդարտները և գնահատումները), կոռուպցիան (օրինակ՝ վճարումները դիպլոմ գնելու համար), թույլ ռազմավարական պլանավորումը, թերֆինանսավորումը (օրինակ՝ վճարովի սարքավորումներ՝ ներառյալ ուսումնական նյութեր, շինություններ), կազմակերպչական անարդյունավետություններ, շուկայի հետ անբավարար կապը, խոցելի խմբերի երեխաների համար պակաս մատչելիությունն ու դուրս մնալու ռիսկը: Ցանկանալով առաջընթաց կերպով ինտեգրվել Բարձրագույն կրթության եվրոպական Բնագավառ (Բոլոնիայի գործընթաց)՝ կառավարությունը նվիրված է ավելի բարելավել իրավիճակը և արդիականացնել օրենսդրությունը Բոլոնիայի հռչակագրի սկզբունքներին համապատասխանեցնելու համար: Մարդկային ռեսուրսների զարգացումը կառավարության Աղքատության Հաղթահարման Ռազմավարության սյուններից է: Այս ռազմավարությունը ընդհանուր կրթության բարելավումը համարում է, որպես մեծ առաջնահերթություն, բայց բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության ոլորտները նույնպես առաջնահերթությունների ցանկում են: Ընդհանուր կրթությունը համարվում է, որպես ավագ դպրոցի հավաքագրման և մասնագիտական կրթական համակարգի հիմք, մասնավորապես խոցելի ընտանիքների երեխաների համար: 2001-2005թթ. կրթության Ջարգացման Պետական Ծրագիրը, 2004թ. Մասնագիտական կրթության (ՄԿ) ծրագիրը և «Կրթության մասին օրենքը» բարեփոխումների հիմք են հանդիսանում: ՄԿ մասին օրենքը և բարձրագույն կրթության օրենքը ներկայումս գտնվում են նախապատրաստման փուլում: Հայաստանը մասնակցում է Tempus ծրագրին բարձրագույն կրթության արդիականացման համար ներքևից վերև փոխանակման ծրագրերի և կառուցվածքային միջոցառումների միջոցով, որոնք նպատակաուղղված են տեղական բարեփոխումների կարողությունների հզորացմանը: Այն մասնակցում է նաև երիտասարդական ծրագրին, որը հզորացնում է երիտասարդների ոչ ֆորմալ բնագավառում կրթության համագործակցությունը, մասնավորապես բազմակողմանի երիտասարդական փոխանակումների, միջազգային եվրոպական կամավոր ծառայության, ինչպես նաև երիտասարդ աշխատավորների վերապատրաստման և երիտասարդական ՀԿ-ների կարողությունների կառուցման միջոցով: Տարածաշրջանային երիտասարդական գործունեությունները նպատակաուղղված են տարածաշրջանի հանդեպ բաց մտքով նոր սերնդի ստեղծմանը: Վիզաների ներկայիս պահանջները և գործընթացները որոշ բարդություններ են ստեղծում երիտասարդների շարժվելու հնարավորությունների համար:

Կառավարությունը ֆինանսավորում է **հանրային առողջապահության** ծառայություններ տրամադրողներին, բայց հասկանալի է, որ այն լրացուցիչ ֆինանսավորման և առողջապահական ծրագրերի նախագծման և իրականացման գործում հասարակության մասնակցության քաջալերման կարիք ունի: Ապահովագրության թերզարգացման պատճառով շուկան չի կարողանում համապատասխան մասնավոր առողջապահական ապահովագրություն տրամադրել: Երկրի Աղքատության Հաղթահարման

Ռազմավարական Ծրագիրը նպատակ ունի պետության կողմից երաշխավորված առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի էական ավելացման միջոցով պահպանել հանրային առողջապահությունը: Գործնականում եկամուտների անհավասարությունը նպաստում է բժշկական ծառայությունների անհավասար մատչելիությանը: Աղքատներին աջակցելու համար կառավարությունը հիմնել է Հիմնական Նպաստների Փաթեթ (ՀՆՓ), որը պետք է առանց փոխհատուցման տրամադրվի բոլոր կատեգորիաների որոշ խոցելի խմբերին: Հիվանդանոցների և պոլիկլինիկարի վճարումները կատարվում են Պետական Առողջապահական Գործակալության միջոցով, բայց դրանք ծածկում են առողջապահական ծառայությունների միայն 45%: Մեծաքանակ հիվանդանոցների, հիվանդանոցային մահճակալների, բուժքույրերի և բժիշկների միայն մի փոքր մասն է օգտագործվում: Ոլորտը դեռ մնում է վատ վիճակում գերկարողությունների, հնարավորությունների պակասի և գործող հիվանդանոցների ցածր պահանջարկի պատճառով: Նմանապես, Հայաստանում կա բժիշկների գերկարողություն, որոնց պաշտոնական վճարները շատ ցածր են: Բժշկական աշխատակիցների գերկարողություններին անդրադառնալու համար Հայաստանը փորձեց նվազցնել բժշկական ուսանողների քանակը, որը 1992թ. 700-ից իջավ 250 1995թ.: Երկրում գործում է մեկ պետական բժշկական համալսարան՝ հավատարմագրված Առողջապահության Նախարարության կողմից: Պոլիկլինիկական մասնագիտացված բժշկական խնամք է տրամադրում, մինչդեռ *ամբուլատորիա* կոչվող փոքր կլինիկաները կենտրոնանում են առաջնային առողջապահության վրա: Այս *ամբուլատորիաները* սովորաբար գտնվում են մարզերում և պատկանում են տեղական կառավարություններին: Միայն մի քանիսն են Երևանում, որտեղ դրանք ղեկավարվում են անմիջապես Առողջապահության Նախարարության կողմից: Դրանք ձրի ծառայություններ են մատուցում: Ընտանեկան բժշկությունը կանխարգելիչ առողջապահության հիմնական շարժիչ ուժն է եղել, բայց շատ պոլիկլինիկաներում չկան ընտանեկան բժիշկներ:

Առողջության առաջնային խնամքը ներառում է հանրության կրթում առողջապահական խնդիրների, մայրական և մանկական խնամքի, պատվաստման և ընդհանուր վարակիչ հիվանդությունների բուժման մասին: Ընդհանուր առմամբ մանկական պատվաստումը շատ լավ է: Չնայած, որ ընդհանուր քանակը դեռ ցածր է մնում, 1998թ. ի վեր գրանցվել է ՄԻՎ/ՉԻԱՀ-ի տարածում՝ հիմնականում Ռուսաստանում և Ուկրաինայում գործազուրկ արտագնա աշխատանք որոնողների շրջանում, ինչպես նաև չպահպանված սեռական հարաբերությունների և թմրադեղերի չարաշահման միջոցով: Վերջին տարիներին ավելացել է տուբերկուլյոզից մահացությունների քանակը, բայց ոչ այնքան դրամատիկ, որքան նախկին ԽՍՀՄ այլ պետություններում: Երկրի պետական զարգացման հետ մեկտեղ ժամանակակից կյանքի ոճի առողջապահական ռիսկերը գերիշխող չեն:

Սրտանոթային հիվանդություններից մահացության աստիճանը նախկին ԽՍՀՄ պետություններում ամենացածրն է, բայց ԵՄ միջինից բարձր է: Ուղեղամկանային հիվանդությունների աստիճանը նույնպես ցածր է: Սակայն շաքարախտը և կանացի կրծքի քաղձկեղը մահվան տարածված պատճառներից են: Ինչպես Հարավային Կովկասի այլ պետություններում, ծխախոտի օգտագործման բարձր մակարդակը իր հետքերն է թողնում: Հայաստանն օգտվել է ԵՄ ֆինանսավորման սոցիալական ապահովագրության անհատական քարտային համակարգից և ՄՆՄԶԳ սոցիալական անցման ծրագրից, որը նպատակաուղղված է եղել Հայաստանի սոցիալական համակարգի, ներառյալ առողջապահական ծառայությունների տրամադրման, կայուն զարգացմանը՝ առողջապահական նպաստների բարեփոխումների և առողջապահական համակարգի ֆինանսավորման բարեփոխումների միջոցով: Այս ծրագիրը փորձում է նաև

ընդլայնել առաջնային առողջապահության ծառայությունները՝ հիմք ընդունելով ընտանեկան բժշկությունը և համայնքահեն առողջապահական կրթությունը և արդիականացնել գյուղական առողջապահական հաստատությունների անձնակազմի ունակությունները և հեռավոր գյուղական համայնքների օգնության կարողությունները: Եվրոհամայքներ ֆինանսական աջակցություն է տրամադրել նաև հոգեկան առողջության, ինչպես նաև Գյուճրու հիվանդանոցներում մաքուր ջրի մատակարարման հարցերով զբաղվող ՋԿ-ներին: